

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական,

54րդ ՏԱՐԻ, Ե. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 2

10 ՅՈՒՆԻՈՒՐ 1904

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԹՐԲԱՆԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ 1903ից

(Տարեկան Գրոնթիկ)

ՅՈՎՀ. ԳԱԶԱՆՃԵԱՆ

ԹԱՏՐՈՆ ԵՆ ԻՐ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՂԴԵՂՆԵՐԻՆԵՐ

ՍԱՐԱ ՊԵՐՆԱՌ

Թարգմ. ԶԻՅԹԷ-ՍԱՐԱՅ

ՀԷԼՎԷՏՈՒՀԻՆ (Նորալեպ)

ՓԱՅԼԱԿ

ԱՐՄԵՆ ԶՐԱՔԵԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Համակերպում (Սիրերգ)

ՎԱՐԴԳԷՍ

Շուշանը

ԺԱՆ ՌԱՄՕ

Թարգմ. ՏՕՄԻՆՕ

Խմբագրական Նոթեր

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՍԻՍ Շաբաթաբերթի տարեկան բաժանորդագրիցն է Կ. Պոլսոյ համար քառսուն դր. եւ գաւառներուն համար յիսուն դր., կանխիկ վճարելի: Արտասահման՝ 12 Ֆրանկ կամ 5 րուպի: Թղթաստրական ծախքը Խմբագրութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամեն ամսոյ մէկին: ՄԱՍԻՍ հրապարակ կ'ելլէ ամեն շաբաթ առտու: Այն բաժանորդները որոնք պակաս քերք ստացած են, պէտք է իսկոյն իմացնեն Խմբագրութեան: Ժամանակ անցնելէ վերջ՝ այս տեսակ առարկութիւնները նկատողութեան չեն առնուիր:

Զի հրատարակուած ձեռագիրները եւ չեն դարձուիր:

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասշտիկ պայմաններով:

Զեռ-Բէ ԿԸ ԾԱԽՈՒԻ ՀԱՏԸ ՔԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ

Հասցէ

درعليه ده غلطه ده (ماسيس) غزته سى اداره سى

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Կ. Պոլիս, Ղալաթիա

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

LA CONFIANCE



ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՂԻ ԵՒ ԿԵԱՆՔԻ ԴԵՄ

Ապահովագրական այս ընկերութիւնը, որ հաստատուած է ու կը գործէ Ֆրանս. կա-
ռավարութեան ֆոնդային ներքեւ, երաշխաւորեալ դրամագլուխ ունի՝ հրդեհի ճիւղին հա-
մար 56,000,000 ֆր. եւ կեանքի ճիւղին համար 36,000,000 ֆր.:

ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ մէկն է Եւրոպայի ամէնէն պատուաւոր եւ ամէնէն վստահելի ապա-
հովագրական մեծ ընկերութիւններէն, եւ ուր որ մասնաճիւղ հաստատած է՝ միշտ գոհ
ձգած է իր բոլոր յաճախորդները, իր կատարեալ ուղղամտութեամբը եւ կանոնաւոր գոր-
ծառնութիւններով:

Այս վաղեմի ընկերութիւնը մեծ վարկ կը վայելէ ամէն կողմ. եւ իր գործառնութեանց
ու վստահելիութեան վրայ գաղափար մը տալու համար թուենք մէկ քանին այն հան-
րածանօթ հաստատութիւններէն, որոնք ապահովագրուած են ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍի:

Ֆրանսայի նահանգներու եւ գաւառներու կարգ մը պաշտօնատուններէն զատ, Բարի-
զի՝ Օրէրա, Վոսվիլ, Նուվօթէ, Ամպիկիւ, Ֆոլի-Տրամաթիք եւ այլն թաղերէն, նաեւ
Պոլսոյի, Թուրուզի, Լիոնի, Մարսիլիայի, Նանդի, Նիսի, Ալճէրիոյ, Բուէնի, եւ ուրիշ
տեղերու մեծ թաղերէն:

Պօն Մարչէն, Լուվրի վաճառատունները, Բիկ-Լալոնը, Բրէնթանի, Պէլ-Ժառտինիւի,
Օթէլ, ալ Վիլի եւ Սամարիթէնի մեծ վաճառատունները:

Թրանսալպինիք, Հալլ-Մարսիլիա նաւարկութեան, Մովային Փոխադրութեանց,
Ֆրանսական Թրամուէյներու, խնայողական երկաթուղիի ընկերութիւնները:

Մասնաւորապէս ուշագրութեան արժանիք պարագայ մըն է որ ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ ընկե-
րութիւնը, իր Կազմական Կանոնադրին համաձայն, պարտաւոր է ամէն վեց ամիսը անգամ
մը իր եւմտական կազմութիւնը ենթարկել Ֆրանսայի Առեւտրական Նախարարութեան քնն-
ութեանը. նոյնպէս Սէնի քաղաքապետութեան, Բարիզի Առեւտրական Սենեակին եւ այլն:

Ընկերութեան դրամատունն է Քրէտի Լիօնէն:

Սոյն ընկերութեան Պոլսոյ կողմի գործակալութիւնը ստանձնած է մեր հրապարակին վրայ
իր պատուաւորութեամբը ծանօթ

ԳԱՌՆԻԿ ԱՃԱՌԵԱՆ

Որուն պէտք է դիմել՝ թէ՛ հրդեհի եւ թէ՛ կեանքի ճիւղին վերաբերեալ ապահովագ-
րութեանց կամ տեղեկութեանց համար: Գ. Աճառեան կը վարէ նոյնպէս Compagnie
d'Assurances g n rales Maritimes ծովային ապահովագր. ընկերութեան Պոլսոյ կողմի գոր-
ծակալութիւնը:

Հաւսք.—Պօլիս, Մահմուտ փաշա, Պէոյիւք Երլաըզ խան, Թիւ 14, Լա Դօնֆիանս ա-
պահովագր. ընկ. Գրասենեակը:

Դառնիկ Աճառեան կը վարէ նաեւ, իր անձնական սեփականութիւնը Էդուգ ան-
թիֆաի վաճառատուն մը, Պօլիս, Շուկայ, Մուհաֆազաճըլար, Թիւ 46, ուր գաւառներէն
առուծախի յանձնարարութիւններ կ'ընդունին:

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆՍՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՁ 1828 - 1829

Հ Ր Դ Ե Հ Ի Զ Ի Ի Ղ

Մինչև 1902ի վերջը հատուցեալ փասք	274,000,000	Ֆր.
1902ին գանձուած ապահովագին	24,000,000	»
Դրամագլուխ երաշխաւորեալ	119,000,000	»
Ապահովագրեալ դրամագլուխ	21,500,000,000	»

Կ Ե Ն Ս Ց Զ Ի Ի Ղ

Մինչև 1902ի վերջը հատուցեալ փասք	129,000,000	Ֆր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	272,000,000	»
Դրամագլուխ եւ պահեստք	158,000,000	»
1092ին գանձուած ապահովագին	12,000,000	»

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Իւթիոն»ի ապահովագրելոց կ'ընծայեն հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ՁԷ ԳՏՆԵԼ ԱՐԵԻՆԵԼՔԻ ՄԷՁ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՔՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց՝ գեղջեալ գիներով: Նպաստաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի գերադանց քան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան պայմանները: Շահաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւթիոնի ապահովագրողը ՁԵՐՄ են այն վնասներէն եւ յուսախաբութիւններէն, որոնց կ'ենթարկուին միշտ այն անձինք, որ շահաբաժիններու բարդման (accumulation des bēnédices) ՅՅՈՒԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դուրեքամբ գործող ընկերութեանց կ'ապահովագրուին:

Ընկերութեան դրամասունն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆՔԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելի Տնօրէնութիւն

Պոլիս, Սուլթան Համամ, Բասաթ Քաթրէք Օղլու

Մասնաճիւղ՝ Ղալաթիա, Խայէթ Խան: Գործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ



ՅՈՎԱԶԷՓ ՊԱԼՊԱԼԵԱՆ

(ՄԵԼՐՈՒՆԻ)

ԱՏԱՄՆԱՐՈՅԺ

Մուգաֆէրիէ Հիւանդանոցին եւ

Պարսկական Դեպարտամենտին

Բերա, Մեծ Փաղոց, Քաղսիմ, քիւ 61

Զրահեան աբաւքման

Պալպալեան ամէն օր ակուայի ամէն տեւակ հիւանդութիւններով տառապողներէ կ'ընդունի. իսկ Ուրբաթ, Կիրակի եւ Ներք շաբթի մինչեւ ժամը 5, Գիշերուան ո եւ է ժամուան կարելի է դիմել: Պալպալեան կ'երաշխաւորէ իր լեցուցած ու չինած ակուաները: Ցորեկները ակուայ քաշել տալու համար որոշ վարձք մը չկայ. քաշել տուողին կամքէն կախեալ է:

Աղփասներուն ձրի

ԱՊԱՌԻԿ ՎԱՃԱՌՈՒՄ

ՀԵՐՃԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՎԵՐՁԻՆ ԳԻՆ



Եթէ կ'ուզէք ամէն տեւակ գոհարեղէններ ունենալ, աժան ու ճաշակաւոր, թէ՛ արեւելեան եւ թէ՛ եւրոպական ճաշակով պատրաստուած, ժամացոյցներ, արծաթեայ գաւազաններ եւայլն, դիմեցէ՛ք Պոլիս, Ոսկերչաց Շուկան, Մեծ-փողոց, թիւ 13:

Հարիւրին 20 կանխիկ, մնացեալին համար 100ին 5 շաբաթական վճարում: Կանխիկ գնողին համար հարիւրին 5 զեղչ: Գործածուած գոհարեղէնները եթէ փնտսուած չեն՝ 100ին 10 զեղչով եւ կ'առնուին. իսկ ապառիկ գրնողներէն՝ 100ին 15 զեղչով:

ԺԻՐԱԿԱՆ ԱՄՏԻ ԳԵՄ ՆԱԽԱԶԳՈՒՂՈՒԹԻՈՒՆ

Ծերական ախտի դէմ նախազգուշութեան միայն ճամբայ մը կայ. այն է մարմինը միշտ կենսական զօրութեամբ պահել որնոր դրութեան կենսական զօրութիւնն, առողջութիւնն և դիմացողան ոյժ տալով կրնայ ըլլալ:



SCOTT'S EMULSION

աշխարհիս մէջ ամենալաւ “ուտելիք—դեղ” է. որ շուտմը առողջութիւնը կը վերականգնէ և երակներու մէջ նոր հարուստ արիւն կը տարածէ:

Եթէ կազմութիւնը կատարեալ առողջութեան մէջ չէ և բարակցաւ առաջին նշանները երեան կ'ելլեն. ինչպէս տեղական գունատութիւն, թեթեւ սակայն թելաթար հազ, զիշերները սաստկացող բարեխառնութիւն և, անորժակի կորուստ ևն. ժամանակ վատնելու չէ, մէկէն Ըսգոթի Բաղադրութիւնն առնելու է. միակ դեղն է որ կրնայ մարդս առողջութեան և զօրութեան վերականգնել և այս եղանակով կործնական պէս կը տեսնուի վատնող հաղաթաւորներ տեսածէն և կը տեսնեն:

ԸՍԳՕԹԻ ԲԱԳԴՐՈՒԹԻՈՒՆ

կատարեալէս անուշահամ է, անորժակը կենդանացունէ, և մարտողութիւնը կ'աճապարէ: Հիւանդութեան սեմը կը մեղքնէ և շուտմը մարմինը կը զաւալէ: Ըսգոթի Բաղադրութիւնն բնորոշ այս տեսնուած նշանով վարդադոյն փաթեթի մը մէջ կը գտնուի:

Հիշերու վրայ ասոր ուշադրութիւնն ընել պէտք է:

Բոլոր բեռնաբերները և բեռնաձառները ին ծախեն:

ՏՕԲ. Ն. ՏԱԳԱԽԱՐԵԱՆԻ ԳՈՐԾԵՐԸ

	իր.
Գիտական շարժում	Բ. տարի (1886) 20
» » »	Գ. » (1887) 20
Բնական Պատմութիւն Ա. հատոր (Կեդ. Հիսունամարանութիւն և Մարդկային Կազմախօսութիւն ու Բնախօսութ. Դասագիրք երկրորդական վարժարանաց	40
Նախորդին համառօտը. Դասագիրք Նախակրթարանաց	8
Ծագումն հայ տառից (Պատկեալ Իզմիրեանց մրցանակաւ)	10
Մանրէաբանութիւն	10
Տիեզերք և իւր կազմութիւնը (Յրանս)	10
Առողջապահութիւն	25
Մանրական Գործարանք (Կազմախօսութիւն. Բնախօսութիւն և Առողջապահութ.)	6
Մարդկային Ազգախօսութիւն	5
Բառացուցակ Ախտաբանանց. Բ. Տիպ	3
Տարուինականութիւն, Գ. Տիպ	3

Կեդրոնացեղին է

Մատենադան Տպարան, Ֆինանսներ, Կ. Պոլիս

ԶՄՐԱՆ ԱՌԹԻԻ

Գնեցէք Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ և Յ. ԻՍԱ. ԳՈՒԼԵԱՆԻ՝ Զինաստանէն, Հնդկաստանէն, Ճափայէն և Սէյլանէն ուղղակի բերել տուած բարմ, հոսաւեհ և առողջարար թէյերէն, որոնք ձմրան եղանակին յարմարագոյն ըմպելիներն:

Միշտ ուշադրութիւն մեր վաճառանիչին:

Կ. Պոլիս, Պահէճ Գափու, Ճէլալ պէյ Խան, թիւ 10:

Մասնաճիւղեր Թուրքիոյ գլխաւոր քաղաքներուն մէջ, նոյնպէս Եգիպտոս:



ՄԱՍԻՆ

54^ր ՏԱՐԻ, Ե. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 2

10 ՅՈՒՆՈՒԱՐ 1904

ԹՐՔԱՅԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ 1903ԻՆ

(ՏԱՐԵԿԱՆ ՔՐՕՆԻԿ)

Ժամանակի դարաւոր անիւին յաւիտեանա-
կան հոլովման ճամբուն վրայ, որ իրերու ա-
նընդհատ փոփոխութեանց, էութիւններու
շարունակական յեղաշրջութեանց մէջէն
կ'անցնի կ'երթայ, տարեգլուխները թելադ-
րիչ հանգրուաններ են կարծես ուր մարդկա-
յին միտքը պահիկ մը կը սիրէ կանդ առնել
քիչ մը խորհելու ու ետին դառնալով մէջ մը
դիտելու համար այն ճամբան դոր կտրած է
տարուան մը ընթացքին մէջ: 1903 տարուոյ
վախճանին և 1904ի սեմին վրայ՝ ես ալ
ճիշդ միեւնոյն կերպով կը թելադրուիմ յե-
տադարձ ակնարկ մը նետել անցնող 1903
տարուոյ մէջ մեր հորիզոնին տակ անցած
դարձած գրական դէպքերուն վրայ և շահե-
կանութենէ դուրկ չեմ համարիր վերջիչում-
ներուս տպաւորութիւնները ներկայացնել
նաև Մասիսի ընթերցողներուն:

* * *

Դրականութեան մէջ ամէնէն կարեւոր
դէպքերը նոր գիրքերու հրատարակութիւն-
ներն են և ինչ որ ամէնէն առաջ կը դիտուի՝
մեր (Թրքահայ) գրականութեան ամբողջութիւնն
է այս մասին որ տարուէ տարի կարծես ա՛լ
աւելի կը չեչտուի: Ամբողջ տարուան ըն-
թացքին մէջ ամէնքը երեք գիրք պիտի
կրնանք ցոյց տալ իբրև հեղինակութիւն: Ա-
ռաջինն է վիպական գործ մը, Օր. Մարի
Արապեանի Իր իսկալը, Իզմիրեան կեանքէ
վէպ մը. երկրորդը Ուխտաւորին (Յ. Գ.
Մրմրեան) Ալեյուիա՝ յնրաւադէմը, ամփո-
փոյք մը Ս. Տեղեաց տպաւորութիւններու,
երրորդը՝ Ներսէս վարդապետ Դանիէլեանի

Փողովդակաց քաղաքները, աս ալ հաւաքա-
ծոյ մը նոյն վարդապետին այլեւայլ առեւններ
խօսած ու հրատարակած քարոզներուն:

Եթէ հեղինակութիւն գոնէ քանի մը
հատ ունեցանք, թարգմանութիւն գրեթէ
ընաւ չունեցանք այս տարի, հաշուի չդնելով
Քասիմի կատարած Նաբեկի աշխարհաբար
թարգմանութիւնը որ առանձին հատորով ի
լոյս ընծայուեցաւ, Մանգուսի մէջ իբրև
թերթօն հրատարակուելէ վերջ:

Ժամանակէ մը ի վեր մեր գրագէտները
կարծես թէ արհամարհանքով կը նային թարգ-
մանութիւններու վրայ, առանց նկատի առ-
նելու թէ օտար հեղինակներու գործեր կան
որոնց թարգմանութիւնը չա՛տ աւելի պիտի
արժէր և չա՛տ աւելի օգտակար պիտի ըլ-
լար մեր համայնքին՝ քան մի որեւէ վիժած
հեղինակութիւն: Կար առնն մը, սակայն,
որ մեր գրագէտները, նուազ յաւաքնոտ և
աւելի գիտակից իրենց անձնական հեղինա-
կութեան անբաւականութեանը, աւելի օգ-
տակար կը համարէին թարգմանութիւնները
և անո՛նք էին որ մեր գրականութիւնը օժ-
տեցին կարեւոր թարգմանութիւններու շար-
քով մը: Հիմա ո՛չ ոք կը զիջանի թարգ-
մանութիւն ընելու - յարգելով անշուշտ ան-
ցած տարի փորձած քանի մը բացառու-
թիւնները ոչոնք իրենց հետեւողները չու-
նեցան դժբախտաբար: Իսկ եթէ մեր գրող-
ներուն կը պակսի երկարաշունչ և անձնական
գործեր հեղինակելու ձեռնհասութիւնը և
նոյնքան ալ աշխատելու տրամադրութիւնը,
զայդ պարտկելու համար աւելի կամ նուազ

հիմնաւոր չըմբողանքի պատրուակն ալ պատ-
րաստ կեցեր է. ո՛հ, իրենք ժամանակ չունին
քնաւ աշխատելու, թո՛ղ որ ո՛վ պիտի ապա-
հովէր զիրենք թէ իրենց աշխատութիւնը
պէտք եղած նիւթա՛ն քաջալերութիւնը
պիտի գտնէր ժողովրդէն... Ահա թէ ին-
չո՛ւ համար, ինչպէս շատ հեղ ըսուած է,
Թրքահայ գրականութիւնը տարիներէ ի վեր
լրագիրներու մէջ միայն սահմանափակուած
կը մնայ և մեր գրագէտները թուցիկ յօդ-
ուածներու մէջ իրենց ուժը կը վառեն, ա-
ռանց տեւական և ճշմարտապէս արժէքաւոր
գործեր մէջտեղ բերելու:

Այս տեսակէտով ի հարկէ Թրքահայ լը-
րագրութիւնը արտակարգ արժէքով մը կը
ներկայանայ մեր աչքին առջև, քանի որ հոն
է որ խտացած է մեր բովանդակ գրականու-
թիւնը, և հետեւաբար 1903 տարւոյ մէջ մեր
գրականութեան քանակին ու որակին ար-
ժէքը ճշդելու համար՝ հարկ է լրագրութեան
վրայ ակնարկ մը նետել:

* *

Դրեթէ անցած տարուան տարրերով է որ
այս տարի ալ շարունակուեցաւ մեր լրագ-
րութիւնը:

Դիտողութեան սրժանի է թէ օրագրու-
թիւնը մեր մէջ շատ տարբեր և ուշադրաւ
հանգամանք մը կը պարզէ բազմաոճմբ
Եւրոպականին: Հոն բուն օրագրութիւնը օր-
ուան քաղաքական, գրական, գիտական,
գեղարուեստական, տնտեսական և այլ ա-
մէն կարգի լուրերուն և այժմէութիւններուն
արձագանգն է որ կը պատկերացնէ, կարեւոր
տեղ մը տալով նաև գործնական ծանօթու-
թիւններու, և Հանդէսներուն է որ կը վե-
րապահուին բուն գրական ու բանաստեղծա-
կան նիւթերը, գեղարուեստական ու գիտա-
կան ուսումնասիրութիւններն ու քննադա-
տութիւնները և ինչ, մինչդեռ հոս՝ մերիներուն
մէջ՝ օրուան լուրերուն հետ մէկտեղ կրնաս
գտնել ամէն բան, գրականը, բանաստեղծա-
կանը, ֆանթազիկն, նորավէպը, բանասիրա-
կանը, մատենախօսականը, քննադատականը
և դեռ ինչ որ կուզես: Անանկ որ օրաթեր-
թեր ունինք որոնց գրական մասը եթէ դա-

տես, գործրինակ Մանգումէն, կարելի է ա-
նով կազմել ուրոյն գրական հանդէս մը:
Հակառակը, մեր հանդէսներն ալ—եթէ եր-
բեք Հանդէս կարելի է կոչել մեր շարաթա-
թերթերը—շատ անգամ ա՛յնպիսի նիւթերու
տեղ կուտան որոնք միայն օրաթերթի մը
սխալակերտուն կրնային պատշաճիլ: Նիւթե-
րու այս անընտրողութիւնը խաթարած է լը-
րագրութեան նկարագիրը և այս է պատճառը
որ մեր հանդէսները կրցած չեն ծառայել ի-
րենց ճշմարիտ կոչման, մինչ օրաթերթերն
ալ իրենց անյարմար նիւթերու անճահօրէն
տեղ տալով, շատ անգամ զանց ըրած են
կարեւորը:

Եթէ մեր շարաթաթերթերէն ամէն մէկուն
նկարագիրը ճշդել փորձէինք, պիտի ըսէինք
թէ Մասիս և Արեւ. Մամուլ կը ներկայանան
աւելի իրրեւ զուտ գրական հանդէսներ, այն
տարբերութեամբ որ Մամուլ գաւառական
գոյն մը ունի՝ աւելի տեղ տալով գաւառացի
գրողներու, մինչդեռ Բիւրակցի մէջ կրօնա-
կան և աշխարհիկ—գրական նիւթեր իրարու
հետ կը հիւսուին և ուր կարծես գիտութիւն
և կրօնք, բողոքաբանութիւն և լուսաւորչա-
կանութիւն զիրար կ'ողջագուրեն: Ծաղիկ կը
ներկայանայ աւելի միջազգային տարազով
մը ուր տոհմայինին հետ խառն տեղ կը տըր-
ուի միջազգային նիւթերու: Հանրագիտակ
հետը հետէ կ'որոնցուցած է իր մանկական
թերթի մասնագիտական հանգամանքը—այն
պատճառաւ անշուշտ որ մեր մէջ այդ ճիւղը
մշակող գրագէտներ չունինք—և հիմա ան-
խըտիր տեղ կուտայ ամէն կարգի նիւթերու,
մինչդեռ Լոյս հաւատարիմ մնացած է իր
գաւառաթերթի կոչման, շարունակուելով
միեւնոյն ուժերու գործակցութեամբ որոնց
մէջէն Պարոնեանի մը յաջորդելու արժանի
տաղանդի մը ծխարձակման դեռ ի դուր կը
սպասենք:

Լրագրութեան մէջ հրապարակագրութեան
դերը յայտնի է թէ ի՛նչքան կարեւոր է,
բայց ցաւալի է որ ճշմարիտ հրապարակա-
գիրներ շատ քիչ ունինք: Կ'արժէ յիշել սա-
կայն Բիւզանդիոնի և Մանգումէի մէջ իրենց
խմբագրապետներուն, Սուրհանդակի մէջ՝

Տիոնին ընկերական, տնտեսական և եկեղեցական նիւթերու շուրջը զրօծ շահեկան տեսութիւնները և Արեւելի մէջ Արամ Անտոնեանի «Աջ ու Ձախ»երու շարքը և Յուսակին խմբագրականները :

Օրաթերթերու կեանքին մէջ իբրև նշանակելի հանգրուաններ յիշատակելի են՝ Բիւզանդիոնի երկուհազար թուեակը և Մանգուսի վեցհարիւրթուեակը զոր այդ թերթերու խմբագրութիւնները բախտն ունեցան տօնելու վերջացող տարւոյն մէջ, այդ առթիւ հրատարակելով բացառիկ թիւեր :

Եթէ անցեալ տարուան պէս բանաստեղծութեանց ուրոյն հատորիկներու հրատարակութիւններ չունեցանք, բայց գէթ միւս կողմէ ոտանաւոր բանաստեղծութիւններու ճիւղը այս տարի ալ ո՛չ նուազ մշակողներ ունեցաւ թերթերու մէջ : Յիշատակելի են ծանօթ գրագէտներէն ու բանաստեղծներէն Սիպիլ, Մ. Աճէմեան, Աղեքս. Փանոսեան, Վահան Մալեգեան, Արտ. Յարութիւնեան, ևլն. ու նորերէն՝ Օր. Մառի Յովհաննէսեան (որուն ոտանաւորները շա՛տ աւելի կ'արժեն ապահովաբար քան իր արձակ գրութեանը), Վարդգէս, Մ. Ա. Պարսամեան, Մ. Ուղուրեան, Լ. Բիրիչեան, Վ. Լէն. որոնք այլեւայլ շարժաթաթերթերու մէջ հրատարակեցին աւելի կամ նուազ գեղեցիկ ոտանաւոր քերթութեան և երբեմն ալ ֆորանսներէն աղուոր քերթութեանը թարգմանութիւններ : Այս տարի մեր գրաբարեան գրագէտներուն մէջ զարմանալի փափաք մը վերարթնացաւ գրաբար ոտանաւորներ գրելու և իրարմէ օրինակ առնելով՝ Ռ. Պէրպէրեան, Տ. Եղեղեան, Յ. Մըմբեան, Յ. Գուրգէն, օտար քերթութեանը գրաբար թարգմանութիւններ հրատարակեցին, աւելի կոմ նուազ ոսկեղարեան լեզուով :

Նորավէպի ճիւղը նշանակելի արտադրութիւն մը չունեցաւ այս տարի : Գր. Զօհրապ, նորավէպի մեր է՛ն նշանաւոր վարպետը, բնաւ բան մը չարտադրեց 1903ին(*) : Յի-

շատակելի են միայն այլեայլ թերթերու մէջ Տիկին Զապէլ Եսայեան, Վահան Մալեգեան Փայլակ, Տօմինո, Գլանիկ, ու մանաւանդ Թէոդիկ որուն «Փրցուած էջեր կեանքի հատորէն»ի շարքը ժողովրդական կեանքի պատկերներու հիանալի տողանցում մըն է, գրի առնուած ժողովրդային պատկերալից լեզուով մը որ յատուկ է Թէոդիկի ոճին : Իրրև գաւառական կեանքի պատկերներ՝ յիշատակելի են գլխաւորաբար Դնէլի նորավէպերը Արեւ. Մամուլի և Շահարիկները Մասիսի մէջ : Ծանօթ գաւառացի գրագէտները այս տարի նշանակելի արտադրութիւններ չունեցան, որով գաւառական գրականութեան համար 1903 տարին շատ ամուլ անցաւ :

Թարգմանածոյ գեղեցիկ նորավէպեր ալ բաւական թուով երեւցան, մանաւորապէս Արեւելի մէջ :

Նորավէպէն անցնելով վիպակին ու վէպին՝ նշանակելի է Բասիմի «Կնճոտ հանգոյց»ը, Պետրոս Ագաթանի «Սուտը իրաւ, խենդը խելօք» վիպակը, ինչպէս նաեւ երկու կին գրագէտներու լինքնագիր վէպերը, այն է Օր. Հայկանոյ Մարքի «Աղջկան մը հոգին» և Տիկին Զապէլ Եսայեանի «Սպասման սրահին մէջ»ը որուն հեղինակուհին անակնկալ յանդգնութեամբ մը չի վարանիր մեր առջև պարզելու կանացի կեանքին ինչ ինչ թաքուն և յուզիչ տեսարանները :

Իբրև թերթին հրատարակուած թարգմանածոյ վէպերուն մէջ յիշատակելի են՝ Արեւելի հրատարակած Անաթօլ Ֆրանսի «Կարմիր շուշանը», Մանգուսի հրատարակած Զօլայի «Թէրէզ Ռաքէն»ը, Բիւզանդիոնի հրատարակած Տիկին Մաթիլտ Սէնաօի իտալեան կեանքէ մէկ քանի վէպերը («Բախտի խա» որ Մասիսի նոր տարւոյ Ա. Թիւր օգտեց իր Յակոբիկովը, ԿնԱնԲի ԴՐՈՒԱԳՆԵՐԸ այդ գեղեցիկ շարքը վերապահած է Մասիսի որուն աշխատակցելու բարեացակամ տրամադրութիւնը ցոյց տուած է խմբագրութեանս, ինչպէս 1900—1902 երեք շրջաններուն՝ ուր միմիայն այս գրական շարժաթաթերթին մէջ գրելու պատիւն ըրաւ, միակ բացառութեամբ մը :

(*) Ծ. Խ. — Մանաւոր հաճոյք մը պատճառած պիտի ըլլանք մեր ընթերցողներուն, յայտարարելով թէ՛ տաղանդաւոր գրագէտը

ղերուն զոհերը» և ինչպէս նախ Մասիսի հրատարակած Անտրէ Թէօրիէի «Այծեմնիկի փունջ»ը, և Հէնրիք Սէնքիէվիլի ա՛յնքան գողարիկ «Լիլիէն Մօրրիս»ը: Ուրախալի պարագայ մըն է թէ այս տարի մեր թերթերը թերթօններու ընտրութեան մէջ բաւական հոգածութիւն ցոյց տուին, հստարակ հեղինակներու լո՛կ հետաքրքրութիւն շարժող վէպերուն հետ հրատարակելով նաեւ ո՛չ միայն ֆրանսայի՝ այլ և ուրիշ օտար նշանաւոր հեղինակներէ ալ թարգմանութիւն՝ եր գոհացում տալու համար աւելի զարգացած ճաշակներու: Չեմ հասկնար սակայն թէ ինչո՞ւ մեր թերթերը օրէ օր կ'աւելցնեն իրենց թերթօններու թիւը, 3—4 թերթօն միանգամայն հրատարակելով: Հասարակ վէպի մը հետ՝ գրական վէպ մը կրնայ բանաւորապէս բաւական համարուիլ. անկէ աւելին ես վընասակար կը գտնեմ ընթերցողներուն համար: Բանասիրական նիւթեր մշակողներու թիւը այս տարի նախորդներէն աւելի ցանցառ եղաւ: Հրանտ Ասատուր կարծեմ բնաւ չերեցաւ, Խնչկոնց՝ շատ քիչ անգամ, և Դուրեան Սրբազան մէկ անգամ միայն՝ Հ. Գ. Մէնէվիլիեանի «Արդի լեզուագիտութեան» վրայ գրած քննադատականովը Մանգումբի մէջ: Կրնայ ըսուիլ թէ բանասիրականի մասին այս տարի Արչակ Ալոյզաճեանը (Ս. Անդեղեայ) եղաւ գլխաւորաբար հրապարակը բռնողը:

Այս կարգին մէջ պէտք չէ մոռնալ ոսկեղարու գրաբարի մասին Վիեննական և Վինետիկեան Միթթարեանց միջև ծաղած բանավէճին առթիւ Յ. Դուրգէնի երկարապատում յօդուածները Բիւզանդիոնի և Ծաղիկի մէջ: Այս բանավէճին աւելի կամ նուազ մասնակցեցան նաեւ մեր մէջէն Տիգրան Ետեքէնճեան, Գր. Մալխոս և ուրիշներ:

Մատենալսոսական, քննադատական յօդուածներ ալ պոկաս չեղան. Մուշեղ վարդապետ աւելի քան երբեք առատօրէն արտադրեց այս տարի, գրեթէ բոլոր թերթերու մէջ գրելով կրօնային, եկեղեցական, ընկերական և այլ խնդրոց վրայ լուրջ ուսումնասիրութիւններ:

Մասնաւոր գիտական թերթ մը թէև չու-

նինք, բայց գիտական յօդուածներ գրեթէ միշտ կ'ունենան մեր թերթերը և այս տարի ալ բաւական թուով հրատարակուեցան:

Իր ճիւղին մէջ մասնաւորաբար յիշատակելի է նաեւ մեր աննման քրօնիկագիրը Յ. Ալփիար (Քրիզանթէմ) որ այս տարի ամէնէն աւելի արտադրեց: Իր «Հայու կնիկ»ը՝ Մասիսի մէջ՝ բաւական ազմուէ և վէճ յարուց իր շուրջը: Ինծի կը թուի թէ իր քրօնիկներուն չափ և թերեւս աւելի կ'արժեն նորակէպի ձեւով իր ինչ ինչ գրուածքները ուր ընտանեկան կամ ընկերական կեանքի տեսարաններ կը ցուցադրէ հիանալի ճշգրտութեամբ: Քրիզանթէմի մշակած գրականութեան զուարթ ճիւղին ընդունակ գրագէտներ շատ քիչ ունինք:

Իբրեւ գրական նորութիւններ՝ յիշատակելի են տարւոյս սկիզբը Մասիսի բացած ոտանաւորի մրցումը և վերջերս Բիւզանի բացած նորավէպի մրցումը: Պէտք չէ մոռնալ նաեւ գիրար յաջողող հարցարանները՝ այլեւայլ թերթերու մէջ որոնց մէջ է՛ն կարեւորները կրնան համարուիլ Սիպիլի առաջապած հարցումը՝ Արեւ. Մամուլի մէջ՝ նիւթ ունենալով այր և կնոջ վրայ փնտռուած յատկութիւնները՝ ամուսնութեան ատեն, և Օ. Ձիթթէ-Սարաֆի հարցումը Մասիսի մէջ՝ դաւառացի հայ կնոջ սեռային բարոյականի մասին, խելագրուած Շահարիկի դաւառական մէկ նորավէպէն: Տեղն է յիշել թէ Ձիթթէ-Սարաֆ «Պառլամենտ Եւրոպայի մէջ» խորագրին տակ Բիւզանդիոնի մէջ հրատարակեց իր ուղեւորական տպաւորութիւններու շարքը և Մասիսի մէջ «Ճակատագրային տղամեն»ու շարքը ուր երիտասարդ գրագէտը անգամ մըն ալ ի յայտ կուգայ իրեն ինքնայատուկ այնպի՛սի սիրճաշուք և պատկերաւից ոճով մը որ սուուգիւ հիանալի է:

Նշանակելի է նաեւ Արտաշէս Յարութիւնեանի անցեալ տարի սկսած «Դրական Դիմաստուեմներ»ու շարքը Արեւ. Մամուլի մէջ որ այս տարի ալ շարունակուեցաւ՝ թէև ցանցառօրէն, մինչդեռ Թէոդիկի «Ճանչոր Դէմքեր»ու շարքը երեք տարիէ ի վեր կը շարունակուի Մանգումբի մէջ հո՞ծ իրերայաջորդութեամբ մը: 1903ին Դամէր սկսաւ Մասիսի մէջ գրական գէմքերու յատուկ շարք մը ցայտուն «Ուրուադիք»ու:

Լրագրական հրապարակի վրայ կարեւոր անկարեւոր բանավէճեր այս տարի ալ անպակաս եղան որոնց մէջ կ'արժէ յիշել Պէրպէրեանի և Ա. Փանոսեանի միջև երկուստեք զուտ ոտանաւոր լեզուով տեղի ունեցած վիճաբանութիւնը յանգի մասին. որուն մէջ սակայն իրաւունքը Պէրպէրեանինն էր ապահովարար, հակառակ վերջին խօսքը Փանոսեանի թողուելուն որ ո'չ մէկ տարի այսչափ առիթ ունեցած էր իր ձօն յանգերը ցուցադրելու իր «Ղանազան ու զարմանազան» ու քիչ մըն ալ... անհամազան քրօնիկներով:

Նորածիլ երիտասարդ գրական դէմքեր այս տարի ալ ունեցանք, բայց ո'չ մին դեռ հաստատ գուշակութիւններ կրնայ ընել տալ մեզի: Այս կարգէն են Մանգուլմէն չրջապատող խմբակին մէջ մէկ քանիներ. Մասիսին Վ.ը և Նոր դէմքերուն մէջ մասնաւորապէս յիշատակելի է Լեւոն Քիրիչեանը որ անցած տարի երեւցած էր գրական հրապարակի վրայ և 1903ի ընթացքին մէջ ունեցաւ շատ լուրջ գրական գործունէութիւն մը որ արդէն իսկ կը բաւէ ապացուցանելու իր մտքին զարգացման գնահատելի աստիճանը: Ինչքան երիտասարդ գրողներ ունինք սակայն որոնք պարսպ մտքով ու անտանելի յաւակնոտութիւններով հրապարակ կ'իջնեն և անհաշիւ պատգամներ որոտալով, ասոր անոր հետ յատկապէս վէճի բռնուելով կուզեն միամիտները շլացնել և աժնկէկ կերպով գրագէտի կամ հրապարակադրի անուն մը ձեռք բերել:

* *

Լրագրութեան չրջանակէն դուրս՝ իրրե նշանակելի գրական դէպքեր յիշենք Յովսէփ Իզմիրեանց Գրական Մրցանակը որ այս տարի յատկացուեցաւ Սմբատ փարգապետի «Ներսէս Լամբրոնացի», Խաչիկ Լեւոնեանի «Աղթամարայ Կաթողիկոսութիւնը» և Բ. Ա. ի «Պուլանըխ կամ Հարք գաւառ» գործերուն որոնց երեքն ալ ձեռագիր վիճակի մէջ կրմնան, եթէ չեմ սխալիր: Նորութիւն մըն է նաև յառաջիկայ մրցանակին համար Իզմիրեանց Գրական Յանձնաժողովոյն կողմէ առաջարկուած մրցման նիւթը, այն է՝ «Հայերէն բառարանի մը համար նախապատրաստական նիւթերու հաւաքածոյ կազմել»(*):

Այս մրցումը բանալով՝ Իզմիրեանց Յանձնաժողովը շատ օգտակար դադափար մը յղացած է, զի անով է որ պիտի իրագործուի արդի հայերէնի լիակատար բառարանի մը պատրաստութիւնը որուն ա'յնքան պէտք ունինք:

Հաճելի նորութիւն մը եղաւ նաև Թավշանճեան Յարութիւն էֆ. ի փափաքով բացուած քարոզի մրցումը, որուն համար մրցանակի դումարներ սահմանած է և որուն մէջ առաջին մրցանակները շահեցան Բարգէն և Մուշեղ վարդապետները: Ինչքան փափաքելի էր որ մեր գրասէր հարուստները հետեւէին Թավշանճեաններու օրինակին՝ իրենց նախասիրած նիւթերուն համար իրենք ալ մրցանակներ սահմանելով:

* *

Ահա վերիվերոյ համարատուութիւնը 1903ի Թրքահայ Գրականութեան և անոր յարակից գրական նշանակելի դէպքերուն որք իրենց ամբողջութեանը մէջ, պէտք է ըսել, այնքան արհամարհելի արժէք մը չէ որ կը ներկայացնեն: Չեմ կարծեր որ կամաւ կարեւոր մոռացումներ ունեցայ, բայց եթէ ականջ կամ անկարեւոր մոռացումներ ունիմ, առոնց համար ալ ո'չ ոքի իրաւունք կուտամ սրանեղութիւն դալու: Ես կը յարգեմ բոլոր անոնք որ նոյն իսկ կաթիլի մը բաժինով մասնակցեցան օրուան գրական ու մտաւորական շարժման, բաւական է որ իրենց նըպատակն եղած ըլլայ նպատակ հանրային մտաւոր ու բարոյական զարգացման որուն դռները բաց թողուցած է մեր առջև Կայսերական բարեխնամ Կառավարութիւնը, համաձայն բարեհաճ փափաքանոյ մեր Օղոստափառ և յառաջդիմաւոր Վեհապետին:

24 Դեկտեմբեր 1903

ՅՈՎ. Հ. ԳՍԶԱՆԵԱՆ

(*) Յանձնաժողովը մրցման այս նիւթը երեք մասի բաժնած է աշխատողներու դիւրութեան համար, բայց չկրցինք հասկնալ թէ առաջին մասին մէջ նշանակուած «հին հայերէնէ նորագիւտ բառեր» ըսելով ինչ տեսակ բառեր հասկցնել կուզուի: Ազէկ կ'ըլլայ որ Յանձնաժողովը հաճի այս մասին բացատրութիւն մը տալ:

ԼԱՍՍԱԿԵՐՊՈՒՄ

(ՍԻՐԵՐԳ)

Ձեմ սեսներ բզեզ . այլ դեմքիդ՝ աղուոր
Ու յոյս սեսիլին պեցումն ունիմ խոր
Պահած հոգւոյս մէջ : Ի՜նչ փոյթ . աչքես փակ
Ես կը գոհանամ սիրովդ անապակ :

Ձեմ լըսեր փու ձայնդ . այլ անոր քրքումն
Յար կարճագանգուի իմ ներսս անդադրում .
Ի՜նչ փոյթ քե ծաղիկն ա՛լ չիկայ մեր փոլ ,
Անոր բոյրն ունիմք պահուած սրուակով :

Ձեմ բանար գիրք մեր սիրոյ կեանքին ,
Անցեալն է քաղուած սրժիս մէջ՝ անգին
Մասունքի մը պէս . Ի՜նչ փոյթ , նոր սերեր
Ու նոր յուզմունքներ զիս չեն վրդովեր :

Ձեմ յիշեր նաեւ խոսքումներդ անբաւ .
Ի՜նչ փոյթ կեղծ բլլալն անոնց կամ իրաւ .
Շատո՛նց համն առի ես պատրանքներուն ,
Ու խաբկանքներով սիրսս է դեռ լեցուն :

Ձեմ սեսներ բզեզ . ծովեր կը բաժնեն
Ձիս ֆենէ՝ գուցէ յաւիտեանդ .
Ի՜նչ փոյթ . փու սիրոյդ յիշատակն ունիմ .
Ամբիծ յիշատակդ՝ յա՛ր ինձ մըսերիմ .
ՎԱՐԴԴԵՍ

ԹԱՏՐՈՆ

ՆԻ

ԻՐ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՋԴԵՑՈՒԹԻՒՆԸ

Տրամաթիք արուեստին չէ՞նք զարտիր
միթէ , հասարակութեան առջև յայտնութիւնը
կարգ մը անձնաւորութիւններու նկարագիր-
ներուն՝ որոնք այլապէս անձանթ պիտի

մնային պատմութեան փոշիւից դիւանաթուղ-
թերուն տակ :

Շէքսպիր , Վիքթոր Իւկօ , Ալեքսանար
Տիւմա հայր , ամէնքն ալ վերկենդանացու-
ցած են դիւցազուններ՝ որոնց հեռաւոր դո-
յութիւնը քանի մը կարճաւոտ տողերով
միայն պիտի կրնայինք ճանչնալ : Ի՞նչ պիտի
գիտնայինք Մաքսէթի վրայով՝ եթէ Շէ-
քսպիր կենդանի արարածի մը վերածած չըլ-
լար զայն : Եւ մեր թուականներուն ու իմ իսկ
երկիրիս մեծ բանաստեղծներուն ու թատե-
րագիրներուն գալով , ի՞նչ դիտէինք Ռայ-
խըլթատի դուքսին վրայ , էտմօն Ռօսթանի
զայն Արծուիկին մէջ վերկենդանացընելէն
առաջ : Նաբօլէօնի զաւակը , անուն մըն էր
միայն և ոչ այլ ինչ : Մելամաղձութիւնով կը
մտածէինք որ , Ռօմար արքան իր մեծանուն
հօրը ոչ մէկ բարեմասնութիւնն էր ժառան-
գած :

Բայց , երբ կը տեսնանք Ռօսթանի թա-
տերախաղը , ամէն բան կը փոխուի : Մեր
առջև կուենանք այն ատեն փափկանուրբ
երիտասարդ մը և մեր սիրտերը համակրու-
թիւնով կը բարբախեն՝ երբ ան կը յուզուի ,
իր հօրը մեծագործութիւններուն նկարագը-
րութիւնը առաջին անգամ լսած ատեն :

Նրախտագիտութիւն չէ՞նք պարտիր թա-
րոնին նմանապէս , որ Նաբօլէօն Բ . ը ճանչ-
ցուցած է մեզի :

Եւ յետոյ , ինչէ՛ր չենք պարտիր Սարտու-
ին , որ բեմին վրայ բերած ներկայացուցած
է մեզ՝ անհետացած ժամանակներու սովո-
րոյթները ու բարքերը : Բոլոր ինքնատիպ
գրողներուն պէս , իր ասպարէզին սկիզբները
որչա՛փ զփուարութիւններու դիմադրաւեց :
Հասարակութիւնը տեսակ մը վարտնքով է
որ կը մտնար մատածումին այնչա՛փ նոր բա-
ցալայրերուն մէջ : Բուռն վիճաբանութիւն-
ներ պայթեցան և անոնցմէ ժայթքեցան նոր
լոյսեր որոնք մեծամասնութեան մը օգուտին
համար եկան լուսաւորել ինչ որ դեռ երէկ
խոր խաւար էր միայն :

Եւ սակայն կան տկար միտքեր որոնք
թատրոնը անբարոյական կը նկատեն : Ոչինչ
աւելի անիրաւ է :

Թատրոնը, ընդհակառակը, իսկապէս բարոյացնող ազդեցութիւն մը ունի: Անոր շնորհիւ է որ մատուցուող ծառայութիւնը ու առաքինութիւնը: Ատով հանդերձ, դեռ անձեր կան, որոնք կը կարծեն թէ գէշ բան մըն է դեռատի ազդիկները կարգ մը թատերախաղերու, Փամիլիազարդ Տիկիկին օրինակի համար, տանելը:

Օր մը, միշտ այդ բանին վրայ դիտողութիւն կ'ընէի, մեր Փօպուր Սէն-ժէրմէնի ազնուական ու պատուական տիկինի մը, որ ըսաւ ինձի.

— Իհ, բայց իմ աղջիկըս, գիտէ այդ խաղը:

— Ինտո՞ր կ'ըլլայ, ըսի, գի՛րքը կարգացած է:

— Ո՛հ, ոչ, պատասխանեց քիչ մը խռոված ու չախորժելով: Բնաւ չէ կարգացած, բայց Թրամիլիադան լսած է:

— Բայց ինձի կուգայ որ, բայարձակապէս միեւնոյն բանն է, առարկեցի:

— Բնա՛ւ երբեք, պատասխանեց, ինչու որ երաժշտութիւնը այնչափ կը սրբադրէ թատերախաղին իրապաշտ կողմերը որ, աղջիկս բնաւ չէր կրնար երեւակայել որ բոլոր այդ երգուած բաները կրնան իսկապէս պատահիլ իրականութեան մէջ:

Եթէ իրաւ է որ երաժշտութիւնը արգելք եղած էր դեռատի աղջկան Թրամիլիադային պատմութեանը թափանցելուն, ախիսո՞ս իրեն. այն ատեն պէտք է անպատճառ տանիլ գայն Փամիլիազարդ Տիկիկին որուն պիտի կրնար խելամուռ ըլլալ, որովհետեւ Մարկրիթ Կօթիէի տառապանքն ու մահուան եղբերգութիւնը դաս մըն է որմէ կրնան օգտուիլ բոլոր նորատի աղջիկները առհասարակ:

Ինձի հարցուցին թէ չի՞ կրնար ըլլալ որ, բեմափայլական շլացումը և արուեստագէտներուն ձեւացումները սխալ դադափար մը կաղմկէ տան դեռաբոյս աղջիկներուն, թատերախաղի բարոյականին վրայ, և ես վստահաբար պատասխանեցի.

— Ո՛հ:

Ինչու որ խաղը որչափ կորովի եղանա-

կով մը ներկայացուի՝ դասը այնչափ ուժգին կ'ըլլայ:

Ի՞նչ աւելի ծանր պատիժ կրնար ընդունիլ Փամիլիազարդ Տիկիկին հերոսուհին, քան այն անկարելիութիւնը որուն մէջ բանտուած է և չի կրնար միանալ իր սիրած մարդուն: Ի՞նչ աւելի հզօր պաշտպանողական ի նպաստ առաքինութեան քան սա ապացուցումը թէ բարոյական անկումը, երջանկութեան դուռները գոցելու պատճառ կ'ըլլայ: Կարելի՞ բան է որ ծաղկահասակ աղջիկ մը ներկայ ըլլայ սիրոյ և պարտականութեան այս պայքարին, այս անձկութեան ու այս պատիժին և խորապէս չի յուզուի այդօրինակ կեանքի մը ներկայացուցած բուռն այդ տուաբին առջև:

Նոյն բանը Ֆեօրաի մէջ: Վրէժխնդրութեան, կոյր ու անմտած վրէժխնդրութեան դէմ, ի՞նչ աւելի կորովի ցուցմունք կրնար երեւակայել Սարտու: Ֆեօրաի միակ, ճշմարտապէս անապակ սիրոյն վրայ խոյացող վրէժխնդրութիւնը անոնցմէ է չոր խուլ կիրքը կը վարէ: Փիլիսոփայական ո՞ր մէկ էջը կարելի է բաղդատութեան դնել, կեանքի այդ պատառին հետ: Ի՞նչ որ անկարելի է արժանիքէ ու օգուտէ զուրկ նշկատել այդօրինակ դասեր՝ որոնք հոգիին, ուղեղին ու աչքերուն կ'ուղղուին:

Ուրիշ կէտ մըն ալ. կան մարդեր որոնք կը պնդեն թէ նոյն իրական նիւթերը պէտք չէ բեմի վրայ հանել: Ի՞նչ սխալ:

Եկու տես որ ոչինչ աւելի արժանի է տարածուելու: Թատրոնը համայնքի մը գաղափարներուն ցոլքն է. ան՝ անընդհատ կը դիմէ դէպ ի ճշմարտին ու գեղեցիկին յաղթանակը: Երբեմն նոյն իսկ, չափէն աւելի կ'առաջանայ, ու կ'անցնի հասարակութեան միտքին ու հոգիին սահմանէն անդին, անանկ ատեն մը երբ դեռ ժամը հնչած չէ: Այն ատեն, ետ գալ հարկ կ'ըլլայ: Այդ պարագային մէջ էր, ասկէջ դեռ հազիւ քսան տարի առաջ, թատրոնի մէջ կրօնական հարցը, և այդ՝ հակառակ անկէց առաջներն ալ, այդ ուղղութիւնով եղած բազմաթիւ ջանադրութիւններու: Բայց

գերազանց ուժ մը կը յապաղեցնէր դէպքերուն ընթացքը, և պէտք կ'ըլլար սպասել որ ընդդիմադրութեան հոսանքը սահի երթայ: Հիմա, հակառակորդ միտքերը աւելի հաշտ տրամադրութեան մէջ են, և ստիպուած խոստովանելու որ, այս վերջին տասը տարիներու մէջ ներկայացուած նուիրական թատերախաղերը զմայելիօրէն գեղեցիկ, մեծ վայելուչ են ու սրտաբուխ հաւատքով առլի: Շատ աղէկ կը յիշեմ այն օրը՝ ուր էտմօն Հարօքուր երբ ինծի եկաւ կարգացիր Հրայրէն, ես հիացում կտրած, բացագանչեցի:

—Պէ՛տք է որ խաղանք ասիկա: Ամէն բան աչքս պիտի առնեմ, այս գործը բնմի վրայ հանելու համար:

Բայց ինչչա՛փ պայքար, ինչչա՛փ խիստ մերժումներ, և ի՛նչ այլանդակ առարկութիւններ, ցածոգի յարձակումներ կրեցինք այն ատեն: Այդ տարին անկարելի եղաւ մեզ ներկայացնել զայն իր բուն ձեւին տակ: Բայց հեղինակը ու ես գաղափարին էինք կառնած և ես որոշեցի, ինչ որ ալ ըլլայ, — Ի՞նչ որ ալ ըլլայ իմ նշանաբանս է, — նպատակիս հասնիլ և հասարակութիւնը ստիպել որ ինքն ալ մասնակցի՝ անձայր գեղեցկութիւնով մը օժտուած այդ գործին նկատ տա՛մք իմ տածած խանդավա՛ռ զմայլումի ղգացումներու:

Հաղարումէկ դժուարութիւններէ, միջադէպներէ ետքը, որոնց մէկ մասը կատակերգական էր, միւս մասը վատեցուցիչ, վերջնապէս որոշեցինք այդ թատերախաղը կարգաւ Աւագ ուրբաթ օրը, Լամուէօ նուագահանդէսներու սրահին մէջ, Չմեռուան Սիրքին մէջ: Հոն հակակրական ղգացումներով առլի, ահագին մեծամասնութիւն մը կար որ մասնաւորապէս եկած էր ջախջախելու համար ինչ որ իրենք գայթակղական ձեռնարկ մը կը համարէին:

Սերտ բարեկամներէս շատեր կ'աղաչէին ինծի որ ետ կենամ խորհուրդէս և կ'ըսէին:

—Բնաւ պիտի չի յաջողիք ձեր գաղափարը գործադրել:

—Ընդհակառակը, պատասխանեցի իրենց, կ'ապահովցնեմ ձեզ որ պիտի կարգանք Հարօքուրի Հրայրէն մինչև վերջին ասլը:

Եւ արդարեւ, հաւատքի ու գեղեցկութեան այդ շքեղ գործը սկսայ կարողալ, անտարբեր դէմքերով ունկնդիրներու առջև:

Չարամիտ փսիսութեան, մուսանքներ կ'ընկերանային, ամենագեղեցիկ ոտանաւորներուն: Չէին ընդմիջեր գիս, որովհետեւ կին մըն էի. բայց երբ կարգը եկաւ Յիսուսի դերը կատարող արուեստագէտին, աղաղակներով, միաւիւններով, վայրի գազանի մանջիւններով օղը լեցաւ: Մենք, անսասան, անդրդուելի կերպով կը շարունակէինք մեր դերը արտասանել փոխնիփոխ երբ խեղկատակին մէկը միմոսի եղանակով մը գոչեց.

—Սիրքին մէջն ենք, մուզիգան թող դայ, մուզիգան:

Եւ, բաղմութիւնը պռալէ յոգնած, սկսաւ խնդալ խորհելով որ քրքիջը աւելի վատեցուցիչ է արուեստագէտին համար քան սուրիւնները: Վայրկեան մը կարծեցի որ ամէն յոյս կորսուած էր: Հարօքուր, տեղէն ցատքելով նետուեցաւ բարձրաւանդակին վրայ և բարկութենէն երեսը պատի դոյն առած, պռալայ:

—Ինծի նայեցէ՛ք: Դուք հոս եկած էք, գիտնալով որ Հրայրէ կոչուած ոտանաւոր թատերգութիւն մը պիտի կարգացուէր, ատոր համար դրամ էք վճարած. կամ պէտք է մօրիկ ընէք մինչև վերջը և կա՛մ պէտք է ելլաք երթա՛ք ասիկց:

Յետոյ, ձեռքս համբուրելով ըսաւ.

—Շնորհակա՛լ եմ, տիկին, շատ շնորհակալ եմ:

Ասիկա մողական տպաւորութիւն մը գործեց: Ընկձուած այդ խիստ տրամաբանութեան ու այդ ինքնալստահութեան զըստ պռաւ, ցուցարարները, մինչև վերջը մօրիկ ըրին մեղի լուռ ու մունջ:

Փորձը յաջողած էր: Շատ խօսուեցաւ այդ ձեռնարկին վրայ: Գաղափարին նորութիւնը երկար բարակ վիճաբանութեան առարկայ եղաւ. բայց գրուածքը կը հաւնուէր իրր հղօր ու հիանալի: Մեծ վայելչութեան ու խոր հաւատքի մթնոլորտ մը կը ծաւալէր անոր մէջ: Յաղթանակը նորութիւնը ստեղծողինն էր:

Երեք տարի վերջը, Հրալսէր բեմ հանեցինք իր բոլոր պարագաներով, հանդերձներով, եւայլն: Միեւնոյն ատեն էտմօն Ռօսթան կը ներկայացնէր իր Սամարացի կիներ, երեք արարուածով ոտանաւոր աւետարան մը՝ որ մեծափառօրէն կը թեւածէր աշխարհի վրայ և իր յաղթական ճախրովը կը տիրապետէր անոր: Առաջին ներկայացումը անմոռանալի յուշումի օր մը եղաւ:

Քրիստոնէական սէրը պաշտելիօրէն աւանակ հրճուանքով մը կը լեցնէր սրահը: Ես իսկ, ինքզինքս ուրիշ աշխարհ մը փոխադրուած կըզգայի. հրաշալի բառեր կը թոթովէի և իմ սիրտս կը արօքէր ուրիշներուն սիրտին հետ:

Այլքերէս արցունքներ կը հոսէին, ճշմարիտ արցունքներ, արցունքներ՝ որոնք հիմնովին կը լուան ու կը ջնջեն արատները, մեր հոգիներուն վրայէն, մեր կեանքերուն վրայէն՝ որոնք, աւաղ, շատ երկար են մեր գործած մեղքերուն համար և շատ կարճ, մեր ընել փափաքած բարիքներուն համար:

Ունկնդիրներու բաղմութիւնը՝ խանդավառած, ամէն մէկ տողը կ'արձագանգէր համարական մրմնջիւններով: Քաթիւլ Մէնտէն որ շատ չանցած, ոտանաւոր հիւանալի գործ մը, Սերուհի Թեքեգան պիտի արտադրէր, ոտքի էր կեցած և եռանդաբեր աղաղակներ կը բառնար: Այո՛, այդ օրը, յիշատակելի օր մը եղաւ ինծի համար: Ան կը մօտեցնէր զիս իմ աղայութեանս բոլոր յիշատակներուն և այն ժամանակներուն՝ ուր Յիսուս մանուկին համար միսթիքական պաշտանքի մը մէջ կը խորասուղուէի: Եւ այդ, աւելի քան ոչինչ, ապացուցուց ինծի մեր տաճարներուն մէջ ներկայացուած գրական գործերուն հզօր ազդեցութիւնը, ինչու որ, արդարեւ, թատրոնը Արուեստի ճշմարիտ տաճար մըն է, ինչպէս որ եկեղեցին՝ Հաւատքին տաճարն է:

Քրիստոնէական կրօնքը միշտ անհուն ազդեցութիւն մը գործած է վրաս. թէեւ ժամանակ չեմ ունեցած անոր գծած ամէն պարտաւորութիւններուն ու արարողութիւններուն հետեւելու, բայց ան կը յանկուցանէ զիս միշտ յուզմունքի ու գեղազգիտական

տեսակէտով: Շատ պզտիկ եղած ատենս լրջօրէն մարտաւետ ըլլալու դադափարը ունեցած եմ: Այս զգացումները խոտորում մըն էին հոգիիս համար, որ խանդոտ ու ըզճակաթ ձգտումներով լեցուն էր, հակառակ հրայրքոտ ու կամապաշտ խոռոնուածքիս: Ստոր համար է որ, Հրալսէին ու Սամարացի կիներին պէս կրօնական կամ միսթիք բնութիւն ունեցող խաղերուն կը փարէի սերտիւ ինչպէս պիտի փարէի կրօնական իրողութիւններու, տեսակ մը պատկերներու՝ որոնք ամենամտերիմ զգացումներս պիտի յիշակոյէին:

Իրաւ է որ, էտմօն Ռօսթանի Սամարիքներին պէս թատերախաղ մը կարելի չէր բեմ հանել, առանց առարկութիւններ յարուցանելու: Բայց ես անխախտ կը մնայի, թատրոնին բարոյական ազդեցութեան վրայ ունեցած համոզումիս մէջ: Ի՛նչ աւելի բարոյական քան այն դասը զոր կը քաղենք Սամարացի կնկան ու Ամենափրկիչին պատմութիւնէն:

Սիրոյ ու զղջումի այդ մեծ դասը, բանաստեղծին գրիչովը գծագրուած ու արուեստին բոլոր յարամասերովը (accessoires) սարքուած, մեծ տպաւորութիւն գործեց ունկնդիրներուն վրայ: Կը պնդեմ որ, այդօրինակ ներկայացումի մը մէջ, թատրոնին ազդեցութիւնը, բարձր ու անխառն բարոյականութիւն մը կը թորէ: Եւ յետոյ, բացարձակ կերպով չեմ քաշուիր ըսելու որ, պատմութեան այդօրինակ գեղեցկութիւններուն ու անկէ արտածորած կարեւոր դասերուն եթէ կան անտարբեր հանդիսատեսներ, անոնք, տրամաթիք արուեստին ներուժ տպաւորութեանը անզգայ մնացողներն են ապահովաբար:

ՍԱՐԱ. ՊԵՐՆԱՌ.

Թարգմ ՉԻՖԱԼԷ-ՍԱՐԱՖ.

ԳՐԱԿԱՆ ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Նիկոմիդիոյ դրասէր երիտասարդներէն Արրահամ էֆ. Կ. Կտաճեան մէկ օրինակ տարեկան Մասիս նուիրեց քաղքին Ասքանազեան մատենադարանին, 1904ի սկիզբէն:

ՀԵԼՎԵՏՈՒՀԻՆ

(ՆՈՐԱՎԷՆ)

Շոգեկառքը կը սուրար Հունգարիոյ լայնատարած դաշտերուն մէջէն, որոնց տաղաւացուցիչ միօրինակութեան տակ ընկճուած՝ ճամբորդները կը մրափէին իրենց նստարաններուն վրայ:

Հելուեաիա կ'երթայի, որու բնական գեղեցկութիւններուն համարը հասած էր մինչեւ մեր գիւղի վարժարանը: Շոգեկառքը մղոնները կուլ կուտար, կը թռչէր ամայի սդէքներու վրայէն, ուր ո՛չ մէկ կենդանի էակ, թռչուն մը իսկ չէր տեսներ:

Հրանտին հետ միասին կը ճամբորդէին: Բարեկամա առաջին անգամը չէր որ այդ երկիրը կ'երթար.—երկու պարիէ ի վեր ուսանող էր ան արդէն Նէօշաթէլի մէջ և միայն արձակուրդի առթիւ մեկնած էր անկէ, իր մօր և քրոջ քով երթալու համար: Հոն ծանօթացայ իրեն, և որովհետեւ ուսումնաւոր պաշարունակելու նպատակ ունէի՝ որոշեցի ես ալ միեւնոյն վարժարանը մտնել:—Ամիս մը ետքը ճամբայ կ'եղնէինք:

Ադէկ կը յիշեմ, ուրբաթ իրիկուն մըն էր որ չոգենաւ նստանք Դանուրի վրայ: Սաստիկ հովով մը անձրեւ կը տեղար և գետին ջուրերը բաւական խոշոր ալիքներ կը ձեւացընէին՝ որոնք շառաչումով կ'երթային փչրուիլ եզերքի ժայռերուն վրայ:

Հակառակ սպադայի ծիծաղիլոտ հեռապատկերներուն՝ տխուր էի այդ իրիկունը, որովհետեւ կը բաժնուէի հօրմէս, բաղամեայ գարոցական ընկերներէս և—ինչ մեղքս պահեմ—թխորակ աղուոր աղջնակէ մը, որուն համար սիրային առաջին ոտանաւորս գրած եմ...

Հրանտ, ընդհակառակը, ուրախ էր. և չնորհիւ իր զուարթ պատմութիւններուն և քանի մը ծիծաղելի դէպքերու որոնք պատահեցան չոգենաւին մէջ, երկու օր չանցած՝ վերստին ստացայ զուարթ նկարագիրս:

Երրորդ իրիկունը՝ կէս գիշերին մօտ՝ ուս-

մանական նաւահանգիստ մը հանդիպեցանք. չոգենաւը մէկ ժամ պիտի սպասէր հոն:

—Արա՛մ, ըսաւ ընկերս, եթէ հիմնալի խաղող ու ձմերուկ ուտել կուղես, ցամաք ելլենք, ես այս տեղերը գրպանիս պէս կը ճանչնամ:

Լուսնակ գիշեր մը ըլլալուն՝ դուրսը ամէն բան յստակ կ'որոշուէր: Քաղաքը փոքր թէ՛ և՛ բայց շատ սիրուն էր, շինուած ըլլալով պարտէզներու և այգիներու կրկին չորջանակի մը մէջ: Հինգ վայրկեան քալելէ յետոյ, հասանք ընդարձակ հրապարակ մը, ուր բաղմաթիւ գիւղացիներ կը ննջէին: Ասոնք հետեւեալ օրուան համար պտուղ բերած էին վաճառելու: Հրանտ մօտեցաւ մէկուն և ոտքով անոր կողին դպաւ: Մարդը շակուեցաւ, աչքերը շփեց, երեսը խաչ հանեց և սկսաւ խօսիլ. դժբաղդաբար երկուքս ալ ուսմաներէն չէինք գիտեր: Վերջապէս կէս ժամի յամր խօսակցութենէ մը յետոյ՝ քանի մը օխա խաղող և երեք հատ ալ ձմերուկ գնելով վերադարձանք, ու չնայելով որ իրիկունը լաւ մը ընթրած էինք՝ դարձեալ փառաւոր ճաշ մը ըրինք և կամիջակին վրայ ելանք շրջադայելու:

—Սիրելի՛ս, ըսաւ Հրանտ թեւս մտնելով, գուն իրաւ որ բաղդաւոր ես ինծի հետ ճամբորդելուդ համար, որովհետեւ՝ առանց յաւակնոտութեան՝ կրնամ ըսել որ ես փորձառու եղած եմ ապփախ երկար ճամբորդութիւններու մէջ: Ասկէ երկու տարի առաջ, կը հաւատա՞ս, բոլորովին մինակ ճամբորդեցի առաջին անգամ և Աւստրիայէն անցայ, առանց բառ մը գերմաներէն գիտնալու... կրնաս երեւակայել թէ ի՞նչ արկածներ ունեցայ, Վիեննայի մէջ մանաւանդ ուր ճաշարանի սպասաւորները հացի տեղ խոզի ապուխտ կը բերէին ինծի և կաթի տեղ խորոված գետնախնձոր...

Հետեւեալ առտուն, մինչ չոգենաւը յամր ընթաց կանցնէր «երկաթեայ Դուներ»էն, Հրանտ իր ինքնակենսագրութիւնը ըրաւ ինծի, երբ նորիս ճաշէն յետոյ՝ pliant ներու վրայ նստած՝ Ռուսմանիոյ եւ Սերպիոյ ափերը կը գիտէինք փոփոխակի:

Մեր ճամբորդութեան հինգերորդ օրը, արշալոյսին, կառախումբը դուրս թաւ թիւրոյի գեղազուարճ հովիտներէն եւ մտաւ ընդարձակ դաշտերու մէջ, ուր հոս ու հոն անտառակներ ափռուած՝ ծաղկեայ փունջերու տալաւորութիւնը կընէին: Հեռո՛ւն, բարակ մշուշին մէջէն պղտիկ քաղաք մը կը տեսնուէր, որու եկեղեցիին զանգակատունը կը փալփլէր արեւուն առաջին ճառագայթներուն տակ: Տասը վայրկեան յետոյ, Հելուեւ տիոյ առաջին կայարանը կը հասնէինք:

Նոյն օրն իսկ, կէս օրէ վերջ, մտից քընտուրիւն կուտայի եւ տոմարին մէջ կ'արձանագրուէի, իբր երկրորդ կարգի աշակերտ, Հրանտէն դասարան մը վար:

Դասերը սկսած էին արդէն: Սոսկալի դժուարութիւններ ունեցայ առաջին շաբաթները, ինքզինքս բոլորովին տարբեր միջավայրի մը մէջ գտնելով, մանաւանդ որ լեզուն ալ աղէկ չէի գիտեր: Եթէ Հրանտը հետս չըլլար, թերեւս ձգէի վարժարանը երրորդ օրն իսկ, բայց ան կը քաջալերէր զիս եւ իր փորձառուի համոզումով կը կրկնէր.

— Կը վարժուիս, սիրելիս, կը վարժուիս, գիշերօթիկի կեանքը ամենքան տաղտկալի չէ որքան կը կարծես. երբ ձգմարիտ բարեկամներ շահիս եւ հետզհետէ բնաւանաս դըպրոցի կարգ կանոնին, այն ատեն ասլահով եմ որ վարդազոյն պիտի տեսնես կրանքդ:

Կիրակի եւ տօն օրեր այցելութիւններ կընէինք. բարեկամս կը ներկայացնէր զիս իր ծանօթներուն, որոնք շատ անգամ ճաշի եւ երեկոյթներու վար կը դնէին մեզ: Հրանտ շատ սիրուած էր այդպիսի ընկերութիւններու մէջ. երկու տարի ամենաշատ ապրելով՝ կատարեալ կենցաղագէտ մը եղած էր: Իր բոլոր շարժումները, սքանչելի ֆրանսերէն ու գերմաներէն խօսուածքը, մանաւանդ իր սրամտութիւնը հիացում կ'աղդէին ամենուն: Օրիորդներն ու երիտասարդ կիները իրարու ձեռքէ կը յափշտակէին զայն խօսակցութեան մէջ, ու պիտի դարմանայի եթէ իր մեղամաղձոտ սեւ աչքերը, իր քիչ մը թուխ ու ծիծաղկոտ աղուոր դէմքը, սեւ մազերը

մանաւանդ, երկար ու առատ սեւ մազերը, այդպիսի յաղթութիւններ տանիլ չտային անոր:

Երկու ամիս անցած էր, օր մըն ալ, պտոյտէ մը վերադարձին, բարեկամս յանկարծ հիւանդացաւ եւ երկու օր չկրցաւ դասարան դալ: Այնուհետեւ ալ իր առաջուան վիճակը չվերստացաւ. շաբթուան մէջ անպատճառ մէկ քանի օր կը բացակայէր: Վերջապէս բժիկները քննեցին զայն եւ պատուիրեցին որ Հրանտ վարժարանէն հիւանդանոց փոխադրուի ու մեկուսացուի:

* *

Լուսինը կը համբուրուէր հորիզոնին հետ: Աւազաններու անսահման շղթան իր վիթխարի շուքը կը ձգէր Նեօշաթէի լճին վրայ, որուն եղերքները հոս ու հոն ցրուած՝ փոքրիկ գիւղերու լոյսերը կըսկսէին վառուիլ հետզհետէ:

Հիանալի իրիկուն մըն էր. բարակ հովի մը ալեակները վազելով կերթային միսճիլ պարտէզի դարաւոր սօսիի սաղարթներուն մէջ, որոնց խորհրդաւոր խաղափումները հին օրերու առասպելները կը յիշեցնէին ինձի:

Ու լուսինը կը բարձրանար յամրաբար երկնակամարին վրայ. հեռո՛ւն, ձիւնապատ լեռանց գագաթները կը կարմրէին իր ճառանչներուն տակ, եւ լիճը, ընդարձակ հայելիի մը պէս կը ցոլացնէր երկնային լապտերի շողերը:

Այդպիսի կախարդիչ տեսարան մըն էր որ կը պարզուէր մեր աչքին, հիւանդանոցի պատուհանէն, որուն առջեւ երկար աթոռի մը վրայ կէս մը պառկած՝ կը մտածէր խեղճ բարեկամս Հրանտ, դէմքը դալկահար եւ աչքերը փոսերու մէջ...

Իր հիւանդութենէն ի վեր արդէն ամէն օր կերթայի տեսնել զինքը. այդ իրիկունը յատկապէս կանչել տուած էր զիս, անշուշտ կարեւոր եւ ստիպողական բան մը ըսելու համար, քանի որ գիտէր թէ դիւերուան այդ ժամուն մենք ճաշի իջած կըլլայինք:

— Բարեկամս, ըսաւ, երկար լռութենէ մը յետոյ, կը ցաւիմ ըսելու որ...

Բայց չկրցաւ շարունակել, այն չոր հազը

որ կը նեղէր զինքը քանի մը շաբաթէ ի վեր՝ խեղդեց ձայնը կոկորդին մէջ. աչքերէն արցունք կուգար. թաշկինակը բերնին տարաւ ու երբ յուսահատ շարժումով մը անկողնին վրայ նետեց դայն, սոսկումով արեան բիծեր նշմարեցի վրան:

— Սանկ դիմացս նստէ՛ որ լաւ մը զիրար դիտենք, աւելցուց, զի մօտ օրէն պիտի բաժնուինք...

— Ի՞նչ կըսես, գոչեցի յանկարծակիի եկած:

— Այո՛, բժիշկը ըսաւ որ տաք երկիր մը երթալու եմ, եւ Եգիպտոսի կլիման յարմար դատեց ինծի: Կը հասկնաս թէ ի՞նչ ըսել է ասիկա, բարեկամս. թերեւս ա՛լ ընաւ չտեսնենք զիրար... Ուստի կուղեմ որ մնացած քանի մը իրիկունները այսպէս գլուխ գլխի անցունենք: Առաջին օրէն սիրեցի ես զքեզ, կուղեմ որ դուն ալ զիս սիրես իբր քու անկեղծ բարեկամը, ասոր համար լաւ մը հասկընալու ես զիս: Ա՛խ, ճակատագիրը այսքան անգութ ըլլալու էր ինծի հանդէպ: Այնքան դժբաղդութիւններէ յետոյ, այս հիւանդութիւնն ալ ժառանգելու էի:

— Բայց, Հրա՛նտ, ըսի, վիճակիդ մասին այդքան յոռեաես ըլլալու չես. պարզ նախազգուծութեան մը համար է որ մեկնիլ կը պատուիրեն քեզի հիմայ. գիտես թէ որքան առողջ կազմ մը ունիս:

— Առողջ կազմ մը ունէի, սիրելիս, բայց պողպատէ կազմուածք մը իսկ չպիտի կրնար տոկալ այն հոգեկան յուզումներուն, զոր ես ա՜յցուցած եմ:

— Այո՛, պատմած են ինծի արդէն թէ ի՞նչ մեծ դժուարութիւններու բաղկած ես՝ դպրոց մը մտնելու երազդ իրագործելու համար...

— Պա՛հ, ատիկա ի՞նչ նշանակութիւն ունի. մաշեցնող մեծ յուզումները սրտի տաք նապնեւն են. կեանքիս այդ կողմը դեռ չեմ գիտեր դուն. բայց այս գիշեր սիրտս մէկու մը բանալու պէտքը կըզգամ, խօսելու բաղձանք մը ունիմ զոր գոհացնել կուզեմ... Գիտե՞ս, նոր եկած ատեննիս, կիրակի օր մը խարտեաչ օրիորդ մը ներկայացուցի քեզի,

պաշտպանիս եղբոր աղջիկը, Էլէնը. հիմայ տիեզերքս անոր մէջն է, հիւանդ հոգիս անոր աղուոր աչքերուն մէջ միայն կը ցոլանայ. — սիրահար մըն եմ, բարեկամս: Պիտի ծիծաղիս թերեւս հիմայ, «յախտնական սիրահարի պատմութիւն է» պիտի ըսես դուն քեզի, բայց ոչ. չես գիտեր թէ ի՞նչ հակասութեան մէջ եմ. վաղը կեանքիս սպառնացող հիւանդութենէ մը զգուշանալու համար Եգիպտոս պիտի երթամ, չէ՞, բայց կեանքէս, հաւատքէս, յոյսէս պիտի հեռոնամ այդպէսով. կուրծքս տկար է եւ բուժուելու պիտի երթամ, բայց սիրտս հոս պիտի մնայ, հոս Հելուետիոյ մէջ, ասկէ քանի մը ժամ հեռուն, Վիլլա Միուռաի ամարանոցին մէջ...

Հրանտ՝ յոգնած՝ կանգ առաւ: Իր սեւ աղուոր աչքերը կը փայլէին հիմայ, արիւնը գլուխը զարնելով՝ դառուկ ճակտին վրայ քրտինքի կալլակներ կ'երեւէին: Վարը՝ վարժարանի մեծ որահին մէջ՝ մեր ընկերները իրիկուան երգը կ'երգէին՝ խորհրդաւոր դիշերուան երգը, ու երկուքս ալ՝ անխօս՝ մօտիկ կ'ընէինք այդ ներդաշնակութեան՝ աչքերնիս յառած լուսնի շողերով փալփուէն լծին վրայ:

— Առաջին անգամ պաշտպանիս ամարանոցին մէջ էր որ ծանօթացայ Էլէնին հետ, շարունակեց ան, չգիտեմ ի՞նչպէս, առաջին վայրկեանէն տեսակ մը համակրութիւն ունեցանք իրարու. այնուհետեւ մտերմութիւնը շուտով հաստատուեցաւ մեր մէջ: — Անտառներուն մէջ պտոյտի կ'երթայինք միս մինակ, սողայական խօսակցութիւններով ժամանակ կ'անցընէինք, եւ իրիկուան կողմ տուն կը դառնայինք ծաղկի փունջեր գլխարկնուս վրայ: Բաւական արկածներ ունեցած եմ կրնե՞րու հետ եւ կը կարծէի թէ կը ճանչնամ զանոնք: Էլէնը, սակայն, տարբեր տպաւորութիւն մը կ'ընէր վրաս. երբ քովէն կը քալէի, կամ կը նստէինք հովանաւոր ծառի մը տակ, աղնուաքնող, մաքուր հմայք մը կը ծաթէր իր ամբողջ էութենէն. պղտիկ տղու մը պէս միամիտ ու բարի կըզգայի ինքզինքս անոր քով, մտքէս չէր անցնէր թէ սիրոյ սկզբնաւորութիւն մը կը ծնի: Ես՝

սէրը կրակ, բոց, վայելք, տենջ մը երեւա-
կայած էի, ասիկա անոնց հետքն անգամ
չէր. էլէնին ներկայութիւնը կը հմայէր զիս
պարզապէս, այնպէս որ անոր գերին կըզգայի
ինքզինքս. կուզէի որ պէտք ունենար ան
ինծի և մեռնէի իրեն համար: Ու օրերը
կ'անցնէին երազներու պէս: Շատ անգամ
ներ լճին եղերքը կը նստէինք քով քովի և
ջուրին մէջէն զիրար կը զիտէինք գաղտա-
դողի: Վայրկեաններ կ'ըլլար որ բարեկամու-
հիւս ձեռքերը ափս մէջ առնելով՝ կուզէի
խօստովանիլ թէ կախարդուած եմ իրմէն
պարզապէս, թէ իր ներկայութիւնը անհրա-
ժեշտ դարձած էր ինծի, բայց չէի համար-
ձակեր: Կըզգայի միեւնոյն ատեն թէ էլէնն
ալ այդ միեւնոյն ներքին յուզմունքները ու-
նէր, սակայն ամբողջ մէկ ու կէս ամիս միա-
սին ապրելով հանդերձ՝ մեր սիրոյն վրայ բառ
մը իսկ չիփսանակեցինք, բայց երբ մեկնելու
խօսքը կ'ընէի, երբ դպրոցին բացման մօտե-
նալը կըզգայնէի իրեն, երեսս կը նայէր
դարմանքով, առանց հասկնալու թէ ի՞նչպէս
այդ վիճակը, իրարու հետ ըլլալու երանու-
թիւնը կրնար ընդհատուիլ: Այնուհետեւ ա-
ռանձին ապրելու տաղալութիւնները կը
թուէր ինձ, անուղղակի կերպով հասկնալ
կուզէր թէ ի՞նչ կըզգայի բաժանման մեր-
ձենալը տեսնելով:

Ու օր մը հարկ եղաւ դպրոց դառնալ,
նախընթաց իրիկունը, մօտ իրիկուն մը,
պարտէզն էինք. կցկտուր բառեր փոխանա-
կեցինք, երկուքս ալ լացինք մութին մէջ՝
առանց երբեք պատճառին վրայ անդրադառ-
նալու: Թղթակցելու մասին որ և իցէ ակ-
նարկութիւն իսկ չըրինք կարծեմ: Բայց
դպրոց հասնելուս՝ առաջին դրօսս եղաւ ի-
րեն նամակ գրել. տառն անգամ, քսան ան-
գամ փոխելով՝ ահագին ճիւղերէ յետոյ վեր-
ջապէս յաջողեցայ պաշտօնական նամակ մը
ընել զայն. ասիկա տառապեցուց զիս. բայց
չկրցայ ուրիշ կերպ ընել: Ու տե՛ս թէ ինչ
պատասխան տուաւ ինծի:

Հրանտ նամակներու տրձակ մը հանեց
բարձին տակէն ու փոքր պահարան մը բա-
նալով՝ հետեւեալ տողերը կարդաց ինծի.

«Բարեկա՛մս,

«Ձեր մեկնելէն ի վեր այնքան տխուր
չզգացի ինքզինքս, որքան Ձեր նամակը
ստանալէս ի վեր: Այնքան ազնիւ բարեկամ
մը եղած էիք ինձ հոս և այնքան անսեթեւեթ
մտերմութիւն մը ունեցած էինք որ ի՞նչ յու-
սայի թէ այդ ամէնէն բան մը պիտի դնէիք
նաեւ Ձեր նամակներուն մէջ: Բայց խորհելու
էի թէ վարժարանի գուարթ ընկերութիւնը
չառ բաներ կրնար մոռցնել տալ Ձեզ թեր-
եւս. մինչ ևս իմ առանձնութեանս մէջ ինք-
զինքս աւելի տխուր կըզգամ անցած աղուոր
օրերուն վերջուշումովը...»

«Յաջողութիւն կը մաղթեմ Ձեզ»:

է.

Մինչև այն ատեն վարանած էի սիրելս
ես ինծի խօստովանելու, պաշտպանիս դէմ
ապերախտ գտնուելու խղճի խայթը արգի-
լած էր զիս: Բայց այդ նամակը ամէն բան
մոռցնել տուաւ ինծի. յորդեցնող զգացում-
ներս, գրեցի ալ էջերով, առատօրէն գրեցի,
ըսի իրեն թէ դպրոց, բարեկամ, աշխարհ,
ամէն բան մոռցած էի միայն ի՛ր վրայ մտա-
ծելու համար: Ա՛լ անկէ յետոյ թղթակցու-
թիւնը կանոնաւորապէս հաստատուեցաւ մէ-
ջերնիս. դպրոցին մէջ է՛ն մտամիտի և աշ-
խատելու տրամադիր ժամերս նամակ գրե-
լու յատկացուած էին:

Պաշտպանս իր դաւակներուն չափ, թերեւս
ա՛լ աւելի գորով ունէր էլէնի նկատմամբ,
որովհետեւ անոր հայրը՝ տխուր պարագանե-
րու մէջ մեռած էր՝ դեռ չատ երիտասարդ:
Այդ պատճառաւ սկսած էր մտահոգ ըլլալ՝
քանի մը ատենէ ի վեր էլէնը մտածկոտ և
մեղամաղձիկ տեսնելով: Իրեն անկարելի ե-
ղած էր պատճառը հասկնալ, վերջապէս օր
մը՝ դիպուածով՝ իմ նամակներէս մէկը ձեռքը
կ'անցնի, գաղանիքը երեւան ելած էր:

Ու բուն դժբաղդութիւնս այդ օրէն
սկսաւ:—Կարծեցին թէ խաբեբայ մըն եմ և
պարզապէս օրիորդին ժառանգած մեծ հա-
րստութեան պատճառաւ է որ սիրոյ կատա-
կերդութիւն մը կը խաղամ: Մաքուր սէրդ-
արհամարհուած տեսնել, ո՛հ, ասիկա ան-
տանելի բան է: Ապերախտ մը նկատեցին

զիս, աղջիկը հրապուրած ըլլալու ամբաս-
տանութիւնը նետեցին վրաս. այդ բանը հա-
ւասարակըութիւնս խախտեց. տնօրէնը՝
ինքնին շատ բարի մարդ, բայց գործին ո՛չ
լաւ տեղեակ՝ յանդիմանել ուղից զիս օր մը
և առի քալեցի, մոռնալով ուսմո՛ւնքն ալ,
դպրո՛ցն ալ, ապագա՛ս ալ: Ունեցած քանի
մը ֆրանքս ալ ճամբու ծախք ընելով՝ ուղ-
ղակի Լօղան գացի, հացս շահելու համար
է՛ն ստորին ծառայութիւններուն մէջ մտայ,
մինչև անգամ սրճարանի սպասաւոր ըլլալով,
այդպէսով անտիրտ մը, խաբերայ մը, շահա-
մոլ մը չըլլալուս ապացոյցը հեգնութեան մը
պէս նետեցի ամէնուն երեսին. այդ չարչա-
րանքները ներքին գոհունակութիւն մը տունին
ինծի, բայց մարմինս տուժեց...: Յետոյ,
դպրոց կանչեցին զիս դարձեալ. այդպէսով
արժանապատուութեան ղգացումս կը վերա-
ւորուէր, սակայն յանձն առի ամէն բան՝
միմիայն սիրուած էակին մօտենալու համար:

Էլէն կարեւորութիւն չտուաւ այդ ամէ-
նուն, ու վարժարան վերադառնալէս յետոյ
ալ միջոցներ գտաւ իր նամակները ինձ հաս-
ցը՛ելու...

Տնօրէնս լացաւ՝ զիս գունատ ու նիհար-
ցած տեսնելով: Կիրակի օր մը պաշտպանս
անձամբ դպրոց եկաւ և տուն տարաւ զիս
միասին ճաշելու համար. գրեթէ մեքենաբար
հետեւեցայ իրեն, ճամբան շատ քիչ խօսե-
ցանք, սակայն երբ ամարանոցին դռնէն
մտանք և վաղեմի ծոնօթ դէմքերն ու ա-
ռարկաները վերստին տեսայ՝ աչքերս մթադ-
նեցան և դժուարաւ կրցայ ինքզինքս ավտոի
մը վրայ նետել: Էլէն վայրկեան մը միայն
երեւցաւ, բայց այդ կարճ միջոցին մէջ իսկ
կրցայ շատ բաներ կարդալ իր մեկամաղձիկ
աղուոր աչքերուն մէջ: Ես որ այնքան մտե-
րիմ էի այդ տան մէջ և այնքան պարզու-
թեամբ ու մտերմութեամբ կը տեսնուէի Է-
լէնին հետ՝ խորհէ թէ ի՞նչ ղգացի երբ ան
պաղ և պաշտօնական իր ձեւերով՝ եկաւ
ձեռքը ինձ երկարել՝ յուսահատած դէմքով
մը:

Մէկ ու կէս տարի անցած է այն օրէն
իվեր. առողջութիւնս սկսած էր հետզհետէ

բարւոքիլ, բայց այս անգամ ալ ընտանեկան
դժբաղդութիւններ հալածեցին զիս. քսան
երկու տարեկան ըլլալ և այսպէս հիւանդ...

— Հիւանդութիւնդ բան մը չէ՛, սիրելիս,
ըսի, ես մեծ յոյս ունիմ որ քիչ ատենէն ա-
ռաջուան առողջութիւնդ պիտի վերստանաս
և լաւ օրեր պիտի անցընենք միասին. ո՞վ
զիտէ, ապագան ի՞նչ կը ջանիկ օրեր վերա-
պահած է քեզ:

— Ապագան չար խաբերայ ու նախանձոտ
է. երբեք սիրտս հանգիստ չպիտի ըլլայ՝ Է-
լէնէն բաժնուած պահուս երջանկութիւնս
վստահելով անոր...

Հետեւեալ կիրակին հրաժեշտի այցելու-
թեան պատեցանք, ու երկու օր վերջն ալ,
նոյեմբերի սկիզբները, մեկնելու որոշումը
տրուեցաւ: Առտուն կանուխ Հրանտին սեն-
եակը գացի, բարեկամս նամակ մը կը կար-
դար, սև շրջանակով:

— Վերջին երկտողն է, ըսաւ, դեռ երէկ
իրիկունս ստացայ և ինծի երկարեց զայն: Հե-
տեւեալ իմաստով գրուած էր:

«Սիրելի բարեկամս,

«Ահաւորօրէն դժբաղդեմ այս օրեր. մայրս
կորսնցունելու դժբաղդութիւնը չէր բաւեր
կարծես ինծի և անա՛քու մեկնումդ վրայ
կուգայ: Եղիսլոտս երթալուդ լուրը շանթի
հարուած մը եղաւ ինծի. անուշի բան է քեզ
այնքան հեռու դգալը՝ և սակայն, սիրելիս,
քանի որ առողջութեանդ վրայ է խնդիրը՝
այնքան հոգ ընելու չես մեր երկիրը թողե-
լուդ համար: Ես կ'ապահովցնեմ քեզ թէ
պիտի առողջանաս և դեռ այն ատեն նոր
պիտի սկսին մեր երջանկութեան աղուոր օ-
րերը: Ո՛հ, քեզի համար ստեղծուած բառեր
կուղէի դէնը հոս, բայց գրիչս ղգացումնե-
րուս հաղարէն մէկը միայն կրնայ բացատրել՝
կ'աղաչեմ, միշտ զուարթ եղի՛ր և ինքզինքդ
աղէկ խնամէ, ես քեզի համար պիտի աղօ-
թեմ հոս. վստահ եմ թէ շուտով պիտի վե-
րադառնաս...

«Դեռ կուղեմ դրել, բայց գրիչս կ'ըմբոս-
տանայ ղգացումներուս յորդումին առջեւ...
մի՛ մոռնար զի՛ս... ցտեսութիւնս.

ԷԼԷՆ:

—Մեկնելու ժամուկ այսպիսի նամակներ ստանալէդ յետոյ՝ վիճակդ շատ ալ աննախանձելի նկատելու չես, սիրելիս, ըսի, փոքրիկ պահարանը իրեն վերադարձնելով։

—Էլէն գիտէր որ կէս ճամբան կը մեռնէի, եթէ այդ երկտողն ալ չի գրէր...

Պայուսակներու պատրաստութիւնը վերջանալէ յետոյ՝ հայելիին դիմաց անցաւ Հրանտ և խնամոտ արդուղարդ մը սկսաւ ընել։ Դպրոցին մէջ դէմքով մարմնով է՛ն աղուոր եւ է՛ն վայելուչ հագուող տղաքներէն մէկն էր բարեկամս։ Երբ ամէն բան վերջացուց փոքրիկ հայելի մը հանեց գրպանէն եւ ինքզինքը հոն դիտեց ուշադիր։ Այդ պղտիկ հայելին հին բարեկամի մը պէս պահած էր կարծես իր աղուոր օրերուն պատկերները, որոնցմով վայրկեան մը բաղդատեց անշուշտ հիմաւուան դալկահար դէմքը՝ որ մեկամաղձող ժպիտով մը դէպի ինձ դառնալով։

—Արա՛մ, ըսաւ, անցած աղուորութենէս դեռ քիչ մը մնացած է, չէ՞...

Մեքենաբար գրպանէս հանեցի տարի մը առաջ քաշուած իր լուսանկարը զոր ինձ նուիրած էր վերջին պահուն. փոփոխութիւնը մեծ էր, շատ մեծ... միայն իր խոշոր սեւ աչքերը կը վառէին դեռ առաջուան պէս, մինչ այտերուն կլորութիւնը հալած էր կարծես, ու լայն ճակարին վրայ երկար խորշոմ մըն էր գծուած։

Սիրտս յուզուեցաւ, եւ ես որ մանկութենէս ի վեր բնաւ չէի յիշեր լացած ըլլալս, այդ միջոցին արցունքներս չկրցի զսպել եւ որպէսզի Հրանտը չտեսնէ վիզկումս՝ պատուհանին առջեւ գայի եւ արցունքէն պղղտորած նայուածքիս դէպի անդունդը տանող սեւ ճամբայ մը թուեցաւ ինձի երկաթէ ուղին՝ որուն վրայէն քիչ յետոյ պիտի սահէր երթար սիրելի բարեկամս, թերեւս անդարձ...

ՓԱՅԼԱԿ

ԱՐՄԷՆ ԶՐԱՌԵԱՆ

ՅՈՒՐԱԿ

Ֆիւլեսիան կը խոնարհի, վարդը նիրհէ գլխահակ,
Ծաղիկներն ալ մուրին մեջ չեն արձակեր բուրմունքներն.
Միայն շուշան մը արքուն, աղետներով կաթոգին
Մոլորակի մը համար կը հսկէ դեռ երկնի տակ։

Եւ շուշանը լուսափայլ լուսնին կ'ըսէ անդադար.
«Եկուր մօտս ո՛վ սիրասուն մոլորակի իմ պաշտի».
Եւ դէպ ի վեր իր աղետը կը բարձրանայ յուզմամբ իի.
Տանելով հոն խնկաւէս, ներմակ համբոյր մը արդար։

Մոլորակը չի լսեր՝ եւ շուշանը կը մեռնի.
Յօդն ալ անոր գլխուն վրայ կուլայ հիմայ լուսեայն.
Եւ այս սիրոյ արցունքներուն երկինք վկայ է միայն,
Մինչ շուշանը կը պահէ զանոնք ծոցը հոլանի.

Այսպէս. անգութ մոլորակ, գիշեր մը ես տեսայ քեզ
Եւ սիրեցի մահու չափ. մնա՛ս բարով, ո՛վ Տիկին,
Գուցէ պէտք էր որ քեզմէ պահէի ես. տեսնա՞ցիք
Արցունքները, բայց ներէ հեղաշեւտու սիրակեզ։

Թարգմ. ՏՕՄԻՆՕ

ՃԱՆ ՌԱՄՏ

ԽՄԱՐԱԳՐԱԿԱՆ ՆՈՐԵՐ

Ծնունդի պաշտօնական ընդունելութիւնները վայելուչ հանդիսաւորութեամբ կատարուեցան չորեքշաբթի օրը Պատրիարքարանի մէջ ուր համախմբուած էին՝ եպիսկոպոսական դասէն և Վարչութեան անդամներէն զատ, Տեսուչ և Թաղ. Խորհուրդներու ներկայացուցիչներ, քարոզիչ վարդապետներ, լրագրագետներ, Հոգաբարձութեանց անդամներ, ուսուցիչներ և զանազան դասակարգի ազգայիններ՝ մայրաքաղաքիս ամէն թաղերէն։ Ժամ Յին, Ս. Պատրիարքը մտաւ ընդունելութեան մեծ սրահը որ պատկառելի երեւոյթ մը առած էր։ Նախ և առաջ խօսք առաւ Բաղ. Ժողովի ատենապետ Տիգրան էֆ. Եղեւսեֆեան և պարագային յարմար ամփոփ ատենաբանութիւն մը արտասանեց յանուն Վարչութեան, յիշելով Վարչութեան և անոր օժանդակ մարմիններուն աշխատութիւնները, Մայր Աթոռի և Երուսաղեմի գործերը ինչպէս նաև Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը։ Եղեւսեֆեան էֆ. ի վերջոյ արժանաւոր մեծարանք մը ընծայեց Ս. Պատրիարք Հօր աշխուրջ և իմաստուն հոգածութեանն ու գործունէութեանը, և իր ատենաբանութիւնը աւարտեց բարեմաղթութիւններով Վեհ. Կայսեր արեւշատութեան համար, որոնց ձայնակցեցան ներկաները ծափահարութիւններով։

Բարեմաղթական ու շնորհաւորական հակիրճ ատենաբանութիւն մը արտասանեց նաև Յ. Գուրգէն էֆ.։

Ս. Պատրիարք Հայրը, որուն Զատիկի և Ծնունդի տօներուն առթիւ արտասանած ատենաբանութիւնները՝ տարեկան համարատուութիւններ են վարչական գործերու, այս անգամ խօսեցաւ սովորականէն աւելի ընդարձակ կերպով, գրեթէ մէկ ժամու չափ։ Յիշեց, նախևառաջ, դաւառային առաջնորդութեանց Վիճակներու նոր բաշխումը որմէ ետքը Պատրիարքարանը ձեռնարկած է որոշ կաղմակերպութիւններ տալ Պուկարիոյ, Ռումանիոյ և Յունաստանի հայ դաղութներուն հոգեւոր հովուութեանց։ Տեսուչ Խորհուրդներու աշխատութեանց վրայ ընդհանուր ակնարկ մը նետելու առթիւ, մասնաւորապէս շեշտեց Պատրիարքարանի տուրքերուն դանձ-

ման դժուարութիւնը որ նեղ կացութեան մէջ կը դնէ Կեդր. Մատուկը և այս առթիւ արդար դրուատիքն ըրաւ Պատրիարքարանի պաշտօնէութեան որ սակայն, այս պահուս, երեք ամսական պահանջը ունի, ըսաւ։ Կրթութեան գործին վրայ խօսելով, յայտարարեց թէ տարուէ տարի աւելի՝ զարգացած չըլանաւարտներ կը հասնին մեր վարժարաններէն։ Յետոյ անցաւ Երուսաղեմի խնդրոյն և յոյս յայտնեց որ Կեդր. Վարչութեան կողմէ ընծայուած օժանդակութեամբ, Տ. Յարութիւն Ս. Պատրիարքը պիտի յաջողի վերջ մը տալ միաբանական անհամաձայնութեանց։ Յիշեց Թէլեան էֆ. ի պատուիրակութիւնը եւ Երուսաղեմի Վանքին նոր պարտքի մը առջև գտնուելը որուն աճելուն և բազմանալուն առաջքը առնել ընդհանուրին փափագն է։ Ն. Սրբազնութիւնը յիշելէ ետքը Կիլիկիոյ կաթողիկոսութեան գոհացուցիչ վիճակը, խօսեցաւ Մայր Աթոռի գործերուն վրայ և յիշեց եպիսկոպոսական դասին հետ համերաշխաբար իր ըրած դիմումներն առ որ անկ է։

Ս. Պատրիարքը իր բանախօսութիւնը աւարտեց՝ պերճախօս լեզուով մը շեշտելով հայ ազգին դարաւոր հաւատարմութիւնն առ Օսմանեան Գահն, որուն հովանւոյն ներքեւ կ'ապրի բարեբաւոյ, եւ թուելով Վեհ. Կայսեր շնորհները՝ բարեմաղթութիւններ ըրաւ Ն. Կ. Վեհափառութեան արեւշատութեանը համար։ Բոլոր ներկաները ամէնէնքով ձայնակցեցան։

Պատրիարքական բանախօսութիւնը, զոր ընդարձակօրէն հրատարակեցին օրաթերթերը, խոր տպաւորութիւն մը թողուց ունկնդիրներուն վրայ։

Ն Ե Ա Ն Ա Խ Օ Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

Շաբթոս սկիզբը տեղի ունեցաւ ի Բերապրի Տիկիյն Աղանի Յ. Դարակէօղեանի բնակարանին մէջ, արքունի ոսկերչապետ Կարապետ էֆ. Պապանի որդւոյն՝ Յարութիւն էֆ. ի նշանախօսութիւնը Օր. Արմենուհի Յ. Դարակէօղեանի հետ, երկու կողմի ազգականներու ներկայութեամբ։

Արժանաւոր Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

Տպագրութիւն ԱՐԵՒԵԼԻՔ Օրագրի

ՏԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ

ՏՈՒԹ. ՄԱԼԻԱՍԵԱՆ

(ՂԿՂԵՍԱԼ ԲԱՐԻՁԷ)

Մ Ո Ս Ն Ա Գ Է Տ

կանանց հիւանդութեանց, մանկաբարձ
վիրաբոյժ

Բերայի դարմանատունը փոխադրած է՝
կոկին Բերա Սազրզ Աղաճ փողոց, թիւ
26, ուր հիւանդներ կ'ընդունի ամէն օր
կէս օրէն վերջ՝ ժամը 1—4 (Ը. Ե.) :

Ժամադրութեամբ՝ էէս օրէն առաջ :

Կարօտ հիւանդները եր դարմանէ Բե-
րայի (Սր. Երրորդութեան եկեղեցւոյ)
Աղքատախանութի դարմանատունը՝ ամէն
հինգշաբթի՝ առաւօտէն մինչեւ կէս օր :

Ծանօթ. — Վիրաբու ժական, ուղղա
մարզական (orthopédique). Զննդարեւո-
կան եւ ամէն կերպ արգանդի հիւանդու-
թեանց շատ կարեւոր գործողութիւնները
ենթականերու տուններուն մէջ՝ կատար-
եալ ապահովութեամբ եւ մեծ յաջողու-
թեամբ կարենալ կատարելու համար՝ գի-
տական ամենավերջին մեթոտներու հա-
մապատասխանող կատարելագործեալ գոր-
ծիքներու մանրամասն ամբողջութիւնը
հագացուած է :

ԿԱՐԱՊԵՏ. ԷՅ. ԻԻԹԻԻՃԵԱՆԻ Թարգ-
մանած գիրքերէն հետեւեալները կը գտու-
նուին Պաղատայեան գրատունը եւ մայրա-
քաղաքիս միւս հայ գրադատներուն քով :

	հասոր	ըրե
Կարմիր մարգոց երդուժը	2	10
Ընտանեգութիւն	2	12
Փաթիղի ամուսնութիւնները	1	5
Թափառական Հրեայ	4	50
Արուարձանին տղան	3	15
Հանրակարգին ոճիրը	1	5
Սկզբունք Բաղ. Տանեստութեան	1	4
Ընտանեկան գողտիքներ	3	15

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ Թ. ԳԱՐԱԳԱՇԵԱՆ

Հեռագր. Հասցե՝ ԳԱՐԱԳԱՇԵԱՆ — ԿԻՐԱՍՈՆ
Գնում եւ վաճառում, ներածում եւ ար-
տածում ի հաշիւ :

Բացարձակ պայման՝ ԿԱՆԽԻԿ :

Յանձնառողէքը պիտի գնահատէ յաճա-
խորդը : Կրկնապատիկ կը տուժէ ո՛ր եւ է
վիսա, որ արդիւնք ըլլայ գարծակալութեան
անհոգութեանը : Հրապարակի մասին պահան-
ջուած ծանօթութիւնը փութով կը դրկուին,
եթէ 1 զրշ. նոց փուլ ներփակուի : Յայտա-
գիրը կը դրկուի պահանջողներուն : Դիմողը
երբեք չի վիստոյր. ընդհակառակը :

Յ Ո Ւ Շ Ա Տ Ե Տ Ր

Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

1904 ՏԱՐԻՈՅ ՀԱՄԱՐ

(AGENDA INTERNATIONAL)

Թուրքերէն, Հայերէն, Ֆրանսերէն եւ Յունարէն լեզուներով

Յառաջիկայ 1904 տարւոյ համար նախորդ տարիներէն աւելի ճշիւ եւ աւելի
լինամով պատրաստուած եւ արդէն հրատարակուած է

Պարզ լաքակազմ 3 ըրե.
Ընկիր լաքակազմ 5 »
ՈՍԿԵՁՈՐ ՓԱՌԱԿԱԶՄ 8 »

{ 25 օրինակեմ աւելի գնող-
ներուն գոհացուցիչ գեղջ

Կը գտնուի Պոլսոյ եւ գաւառաց. բոլոր գրադատներու եւ քղա-
վաճառներու ֆով : Հրատարակիչն է

Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ,

ՊԱՅՊԼ ՇԱՌԻՁ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ



ՌՕՍԻԱ - ROSSIA



ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱԾՔ

1881 մարտ 20ի Կայս. Ուքադով արտօնուած

Կեդրոնատեղին Բեդերսպուրկ, իրեն յատուկ շէնքը:

Ընկերութիւնը խիստ նպաստաւոր պայմաններով ապահովագրութիւններ կ'ընդունի ԿԵԱՆՔԻ վրայ, եւ ՀՐԴԵՀԻ, ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ ՎՏԱՆԳՆԵՐՈՒ, ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՐԿԱԾՆԵՐՈՒ ԴԷՄ, ցկեանս ապահովագրութիւն ՇՈԴԵԿԱՌՔՈՎ ԵՒ ՇՈԴԵՆԱԻՈՎ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԵԱՆ ԱՐԿԱԾՆԵՐՈՒՆ ԴԷՄ, ինչպէս նաեւ ՀԱՅԵԼԻՆԵՐՈՒ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ ԿԵՄ-ՐԱԵԼՈՒՆ ԴԷՄ:

Ընկերութեան դրամագլուխը, ամբողջապէս վճարուած

10,666,667 Ֆրանք

Երաշխաւորութեան գումար աւելի քան

137,300,000 »

Ընկերութեան ապահովագրուողներուն վճարուած դրամա-

գլուխ եւ փաստաց հատուցում

282,000,000 »

1902 տարւոյ մէջ գանձուած ապահովագին եւ տոկոս

54,000,000 »

Ամէն տեսակ տեղեկութեանց համար դիմել Կ. Պոլսոյ մասնաճիւղին, Ազարեան խան, Վոյվոտա, Ղալաթիա:

ՍՐՄԱՔԷՇԻ ԶՈՒՐ

(ՊԷՅՔՕԶ)

ԱԽՈՐԺԱՀԱՄ, ԹԵԹԵՒ ՈՒ ՕԳՏԱԿԱՐ

Սոյն հանրածանօթ աղբիւրին ջուրը, ախորժահամ եւ վճիտ, յանձնարարուած է մայրաքաղաքիս ականաւոր բժիշկներուն կողմէ. որոնք անձամբ փորձած են անոր յաւ-կութիւնները: Մասնաւորապէս, քիմիագէտ Պ. Բիէռ Արէշի տարրաւուծած է զայն եւ Թաշտէլէնի ու Գանրգաւաքի ջուրերէն գերազանցապէս լաւագոյն դասած է, ստուգե-լով որ անոր ջրաչափական աստիճանը 1⁰ է եւ բնաւ ստամոքսի ծանրութիւն չիտար:

Տեղական հիւանդանոցներէն չատեր, իրենց բժշկապետներուն յանձնարարու-թեամբ, այս ջուրը կը գործածեն, որ ուղղակի աղբիւրէն կը բերուի տմենայն խնամքով եւ մաքութեամբ, չիչեր ու տակառները հոն լեցուելով ու զմոտուելով:

ՍՐՄԱՔԷՇ ԶՈՒՐին գերընտիր ու անմրցելի ըլլալը հաստատած են նաեւ, քի-միագէտ Տօքթ. Ծաննիէզաւ, հետեւեալ բժիշկները.

Տօքթ. Տուքա փաշա (ընդհ. քննիչ առողջապահական վարչութեան) Կապուչի, Զէրբի, Սթէքուլի. Ավիլիանօ, Մալլի, Միրապէլ. Բանայօթ պէյ, Պալիտիս, Քարաքովսքի. Բլէմով, Մօթման, Տէլլասուտա Ֆայիգ փաշա եւ Սիմօնօֆ:

Վաճառման կեդրոնատեղիներն են՝ ԲԵՐԱ, Մեծ-Փողօց, Հալէպ Խան, Թ. 7. — ՊՈԼԻՍ, Սիրքէհի, Պապը-Ալիի մեծ պողոտային վրայ, Թ. 34 մթերանոցը, ինչպէս նաեւ Շուկային Նուրի Օսմանիյի գրան կից Թ. 21 խանութը:

Սոյն մթերանոցներուն մէջ կը վաճառուի նաեւ, ՍՐՄԱՔԷՇ ջուրէն զատ, Բա-րաքուլաքի ջուր: Դիները շատ աժառն են՝ ժողովրդեան դիւրամատչելի ըլլալու համար:

Փորձի համար չիլ մը գնեցէք ՍՐՄԱՔԷՇԻ ջուրէն, եւ արքան համով ու թեթեւ պիտի գտնէք, որ վստահաբար պիտի գործածէք զայն այսուհետեւ:


ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԱՐԻՄ

ՕՍՄԱՆԵԱՆ ՇԱՔԱՐԱՎԱԴՐՈՐԻ ԲԵՐՈՅԻ

Սոյն հանրածանոթ շաքարավաճառը՝ Բերայի չիտակ ճամբան, թիւ 54, իր խանութը ընդարձակած ու ճոխացուցած է, թէ՛ իբրեւ բարխարոյի եւ թէ՛ իբրեւ շաքարավաճառ, աւելի գոհ ձգելու համար իր բաղձաթիւ յաճախորդները։ Ամբան եղանակին մէջ, համեղ պաղպաղակներու պէսպիսութիւն մը կայ ցորեկ եւ գիշեր։

ՀԱՅԻ ՍԱՐԻՄ Օսմ. շաքարագործը ճոխ միջերջ մը ունի հարսանեկան շաքարեղէններու, ընափր տեսակէ, ու մասնաւորապէս յանձն կ'առնէ հարսանեկան հանդէսներու առթիւ ո՛չ միայն անոնց հայթայթումը՝ այլ նաեւ մատուցումը եւ սպասարկութիւնը տուեսերու մէջ։

Միակ մասնաճիւղ, Ղալաթիա. Թօփճըլար Ճատտէսի, Թ. 101։



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը սեննայ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է։ Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

ՍԻՆԿԷՐ

ՀԱՅԹԱՅԹԻԶ ԿԱՅՍ. ՊԱՐԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Ձեռքի, ոտի ու ոտի եւ ձեռքի միանգամայն մեքենաներ կը գտնուին։

ՍԻՆԿԷՐԻ մեքենաները կը ծախուին մի միայն Սինկէր Ընկերութեան վաճառատանց մէջ՝

ՇԱՔԱՐԱՎԱԴՐՈՐ
ՄԱՍՆԱՎՃԱՐՈՒՄՆԵՐ

ԲԵՐՈՅ

1. Մեծ փողոց, Պօն Մառէի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին՝
2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ.

ԿՍԼԱԹԱ

1. Սինկէր խան, Թիւնէլին ետեւը.
2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին դէմ.

ՊԱԼԻՍ

1. Սուլթան Համամ, Թ.
2. Սուլթան Պէյաղլիա, Թրամվէյի կայարանին դէմ, Թ. 13.

ՍԿԻՒՏԱՐ

Չարչը Պօյու, Թ. 120.

Դասերը եւ նորոգութիւնք ձեռք.

Կատարեալ երաւիաւորութիւն։

Մասնաճիւղեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ։

Սինկէրի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերայ, Մեծ փողոց, Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւղուլուրի տունը։

ՖԵՆԻՔՍ ՕԹՐԻՇԻԷՆ

ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐ. ԸՆԿ.

Հրդեհի եւ կեանքի (ի վիեննա)

ՊԱՏՈՒԱԿԱԼ ՆԱԽԱԳԱՀ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ն. Ա. Բ. ԳՈՒՔՍ ԼՈՒԻ ՏԸ ՊԱՎԻԷՌ

ԼԱ ԷՍԹՐԵՅԵԱ

Ապահովագր. Ընկ. ընդդէմ հրդեհի եւ ծովային արկածներու (ի ՄԱՏՐԻՏ)

Ապահովագրութիւնք կը կատարուին լաւագոյն պայմաններով:

Սոյն ընկերութեանց Դրամատունն է ի Կ. Պոլիս, Քոնսթի Լիօնէ
Ընդհ. եւ յիւսկոր մերկայացուցիչ թուրքիոյ

Գ. ՅԵՐԱՏԵԱՆ

Գրասենեակ, Պոլիս, Հանօբուլօ խան, Թ. 52—53—54—55—56

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Գ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

ԸՆԴՍ. ՄԵԾ ՓՈՂՈՅ ԹԻԻ 200

Կալաթա-Սէլանյի Լիսին Գ' մ

ԳԵ. ՆԵ. ՇԲ. օրերը առաւօտեան կանու-

խեն մինչեւ իրիկուն Ժ. 11½

ԲԵ. ԴԵ. ՈՒՐ. օրերը ճէն մինչեւ 11½

Երբակի օրերը մամաղրութեամբ

սուր կը գտնուի. ուր դիմելու են պէտք ու-
նեցողները:—գին 80 դր:

Ամեն վճարում կանխիկ է:

ՊԱԼԵՆՑ ԳՐԱՏՈՒՆ

Թ. 20, Ջամաթօբլար, Կ. Պոլիս

Ամենաճոխ մքերք դպրոցական, գրական,
գիտական եւ այլ գրեանց

ՊԱԼԵՆՑ ԳՐԱՏՈՒՆԸ պատիւ ունի յայտա-
րարել իր բազմաթիւ յաճախորդաց թէ ունի
հարկ եղած աւելցրած զիւրութիւններ՝ գրե-
ական ամէն յաճախարարութիւն գոհացուցիչ
պայմաններով կատարելու, ըստ որում
իր գրավաճառական մեծ հաստատութիւն մը
բարեբաղած է վերջին տասը տարիներու մէջ
դպրոցական նորաձոր դասագրքերու շարք մը
եւ այսպէս հիմնական բարեփոխումներ ներ-
մուծած է մեր կրթական հին մեթոտներուն
մէջ:

Ջերմապէս կը հրաւիրուին Պոլսոյ եւ գա-
ւառաց կրթական վարիչ մարմինները՝ փու-
թով յանձնարարել իրենց դասագրքերն, ի
նկատ առնելով գրատառն ընծայած առաւե-
լութիւններն եւ ամէն բացառիկ պայմաններն:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԿԵԴՐ. ԳՐԱՏԱՆ

Ջամաթօբլար բիւ 64

ԸՆԹԱՅՔ ԸՆԹԵՐՅԻ.—ԴՊՐՈՑԻԳԻՐԲԸ:
Հրատարակուեցաւ Տարր. Ընթ. Բ. տարին,
ճոխ պատկերներով ու բազմազան նիւթերով՝
հեղ. 2. էֆ. Թրոսեանի. գին 4 դահ.:
Դպրոցի պատ. Տնօրէնք օրինակ չը ձրի կը
ստանան, 50 փարայ բոսթի ծախք զրկելով:
Ուղղակի Դրատան դիմողներուն կարելոք
գեղջ մը տրուի:

Վ. Յ. Յակոբեան Անդդ-Հայ Բառգիրքը
որ սպառելու վրայ է, միսիայն յիշեալ գրա-